

11(334)
20.04.2013

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնապարտությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՄԻՍԿՈՒՊՈՒՄԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆՉԸ

ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի մոտ ապրիլի 17-ին տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին հանրապետության և Ստեփանակերտի նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանիտարահիգիենիկ վիճակի և մանկապարտեզներում երեխաների ընդգրկվածության համակարգման հետ կապված հարցեր:

Առողջապահության նախարար Ջոյա Լազարյանը ներկայացրեց նախադպրոցական հիմնարկներում կատարված ուսումնասիրությունները, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները: Անհարմարություններից խուսափելու համար առաջարկվեց խիստ սահմանափակել երեխաների ընդունելությունը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածության համակարգման մասին կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի զեկույցի համաձայն՝ հանրապետությունում գործում է 42 մանկապարտեզ՝ 3396 երեխայի ընդգրկմամբ: Ստեփանակերտի պետական մանկապարտեզներում 520 մահճակալային տեղերում ընդգրկված է 1160 երեխա, ինչը չի համապատասխանում սահմանված նորմերին:

Վարչապետը անթույլատրելի համարեց մանկապարտեզներում տիրող իրավիճակը, ինչն առաջացնում է երեխաների առողջության և դաստիարակության հետ կապված խնդիրներ: Նա նշեց, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանցի ընդլայնումը առաջնային խնդիր է: Առաջիկա տարիներին Ստեփանակերտի N 4 մանկապարտեզի գործարկմամբ և N 6, 11 դպրոցների շենքերը մանկապարտեզների վերակառուցմամբ մեծանասամբ լուծում կտրվի հիմնախնդիրը: Իսկ մինչ այդ առաջարկվեց մանկապարտեզներին կից՝ այլ պետական շենքերում խմբեր ստեղծել, իսկ 5 տարեկան երեխաներին ընդգրկել հանրակրթարանների նախադպրոցական խմբերում:

Քննարկման ընթացքում հնչեցին նախադպրոցական խմբերի լիարժեք գործունեությանը վերաբերող առաջարկություններ:

Խորհրդակցությանը մասնակցում էին նաև մայրաքաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների տնօրեններ, պաշտոնատար այլ անձինք:

Այդ մասին տեղեկացում է ԼՂՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՐԿՑՈՒՑԻՉ ԵՆ

Ապրիլի 11-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում տեղի ունեցավ դպրոցականների առարկայական օլիմպիադայի արդյունքների ամփոփում և պարգևատրման արարողություն: Այն ներածական խոսքով բացեց փոխնախարար Միքայել Համբարձումյանը՝ հայտնելով ընդունված այն տեսակետը, որ օլիմպիադայում պարտվողներ չեն լինում, քանզի օլիմպիադային մասնակցությունը ինքնին հաղթանակ է: Նրա կարծիքով, բայց նաև պարտվողներ կան. այդ նրանք են, ովքեր իրենց գիտելիքների զարգացման վրա չեն աշխատում, և այն ուսուցիչներն են, որոնք օլիմպիադային մասնակից աշակերտ չունեն:

Օլիմպիադայի արդյունքները ներկայացրեց կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը: Այնուհետև ընթերցվեց նախարարի հրամանը մրցանակային տեղեր գրաված աշակերտներին և նրանց ուսուցիչներին պարգևատրելու մասին: Պարգևները՝ նախարարության պատվոգիր և դրամական մրցանակ, ինչպես նաև «Երագ» հիմնադրամի կողմից հատկացված գեղարվեստական և մասնագիտական գրքեր, հանձնեց կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Շնորհավորելով պարգևատրվածներին՝ նախարարն ասաց, որ դա նրանց կյանքի հիշարժան պահերից է, քանզի քաղում են տքնաջան աշխատանքի քաղցր պտուղները: «Լինել առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթող՝ ինքնին վկայում է տվյալ առարկայի գծով ձեր խոր գիտելիքների մասին», - ասաց նա՝ հանդգնած, որ դրանով նրանք կյանքում հաջող մեկնարկի սկիզբ են դնում: Տարիների փորձը ցույց է տալիս, որ օլիմպիադայներում պարբերաբար առաջնակարգ տեղեր գրաված աշակերտները հաջողությամբ հանձնում են նաև միասնական քննություններ, ընդունվում բուհերի առաջնակարգ մասնագիտություններ և ապագայում դառնում լավ մասնագետներ»: Ս. Ասրյանը հորդորեց շատ աշխատել գիտելիքների զարգացման վրա, քանզի դպրոցական ուսումնառության տարիները շատ բան են կանխորոշում. եսկանը, նշանակալից դպրոցական տարիների ուսումն է, որը հիմք է բուհական կրթության: Հետագա հաջողություններ մաղթելով՝ նախարարը աշակերտներին և ուսուցիչներին խորհուրդ տվեց ինքնահանգստացում չապրել, հետևողականորեն հարստացնել գիտելիքները: Այդ առումով նա անդրադարձավ ավագ դպրոցների, ավելի ստույգ 12-րդ դասարանցիների մասնակցությանը օլիմպիադային: Թվում է, թե հենց նրանց թիվը պետք է շատ լինե, որովհետև 3 տարի շարունակ մասնակցում են օլիմպիադային: Բայց կային աշակերտներ, որոնք հանդես չէին եկել շրջանային (քաղաքային) փուլերում, հետևաբար, չեն մասնակցել նաև հանրապետական փուլին: Եվ որոշ ավագ դպրոցների պատիվ մասնակցությունը հենց պայմա-



նավորված է նրանով, որ ուսուցիչները և աշակերտները կոնկրետ խնդիր չեն դրել օլիմպիադայներին մասնակցելու, չնայած որ այդ դպրոցներում քիչ չեն շնորհալի երեխաները: Բոլոր դեպքերում նախարարը գոհ է արդյունքներից և շնորհակալություն հայտնեց աշակերտներին և ուսուցիչներին՝ տքնաջան, նվիրված աշխատանքի համար: Ի դեպ, ուսուցիչների կողքին, նրանց, ովքեր ամեն տարի մրցանակակիրներ են տալիս, կան նաև մոտերը, ինչը նույնպես ուրախացնող և հուսադրող փաստ է:

Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի աշակերտուհու փոքրիկ ելույթը աշակերտի խորին երախտագիտության խոսք էր առ ուսուցիչ, ով իրեն զինում է գիտելիքներով:

Ավելացնենք, որ այս օրերին երևանում ընթանում է առարկայական օլիմպիադայի 3-րդ եզրափակիչ փուլը: Արդեն մի քանի առարկաներից մեր դպրոցականները վերադարձել են բարձր ցուցանիշներով. մեկ առաջին կարգի դիպլոմ (ռուսաց լեզու - Ասյա Առուստամյան, հ. 3 միջն. դպրոց, 12-րդ դաս), երեք երկրորդ կարգի դիպլոմ (ֆիզիկա - Սերգեյ Հայրապետյան, ֆիզմաթ, 9-րդ դաս., աշխարհագրություն - Արմինե Հայրապետյան, Ասկերանի շրջան, գ. Նորագյուղ, 12-րդ դաս., անգլերեն - Տիգրանով Վարդան, հ. 11 ավագ դպրոց, 12-րդ դաս.), երեք երրորդ կարգի դիպլոմ (մաթեմատիկա - Սերգեյ Հայրապետյան, 9-րդ դաս., Արմինե Հայրապետյան, 12-րդ դաս., ֆիզմաթ, աշխարհագրություն - Սիրանուշ Օհանյան, Մարտակերտի շրջան, գ. Հաթերք, 12-րդ դաս., ռուսաց լեզու - Արման Գրիգորյան, հ. 3 միջն. դպրոց, 9-րդ դաս.), 8 գովասանագիր:

Շնորհավորում ենք: Օլիմպիադան շարունակվում է: Սպասենք նոր մրցանակների:

Սեֆ. Լրատվություն

Վ Ե Ր Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԼՂՀ դպրոցականների 2012-2013 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների

Կարևորելով դպրոցականների ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնությունը՝ դպրոցականների առարկայական օլիմպիադայի նպատակը շարունակում է մնալ տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը, սովորողների մեջ աշխատասիրություն, բարձր պատասխանատվություն արմատավորելը, ինչպես նաև ստեղծագործ ուսուցիչների ներգրավումը շնորհալի երեխաների հայտնաբերման և ուսուցման գործում:

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով յուրաքանչյուր տարի ստեղծվում են հանրապետական կազմկոմիտե և առարկայական հանձնաժողովներ, որոնք անվանական կազմը նախարարի հաստատմանն է ներկայացնում կրթության և գիտության վարչությունը: Կազմկոմիտեն մշակում է օլիմպիադայի նախապատրաստական աշ-

խատանքների իրականացման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաև վերահսկողության իրականացման, լուսաբանման, թափանցիկության և մասսայականության ապահովման մեխանիզմները՝ օլիմպիադայի ողջ ընթացքում պահպանելով նրանց հավասար հնարավորությունները, ապահովելով գործընթացի անաչառությունը:

Կազմկոմիտեն սահմանում է առարկայական հանձնաժողովների գործունեության սկզբունքները, նրանց պարտականություններն ու իրավունքները, ինչպես նաև մշակում օլիմպիադայի անցկացման ժամանակացույցը, սահմանում քվոտաների (սահմանված թվաքանակի) տրամադրման կարգը: Օլիմպիադայի ավարտից հետո քննարկում և վերլուծում է արդյունքները, խրախուսման է ներկայացնում առավել բարձր արդյունքներ ցուցաբերած մասնակիցներին և նրանց դասավանդող ուսուցիչներին:

Հանրապետական կազմկոմիտեն օլիմպիադայի հանրապետական փուլում մրցանակային տեղեր զբաղեցրած հաղթողներից, դարձյալ ըստ քվոտաների, նախարարի հաստատմանն է ներկայացնում եզրափակիչ փուլին մասնակցելու համար երաշխավորված դպրոցականների անվանակազմը:

Հիմք ընդունելով այս ամենը և ղեկավարելով «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի 24-րդ կետի պա-

հանջներով ու հիմք ընդունելով «Դպրոցականների առարկայական օլիմպիադայի անցկացման կարգի» պահանջները, ինչպես նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 26-ի N 222/Մ հրամանը՝ փետրվարի 23-ից մարտի 14-ն ընկած ժամանակահատվածում անց է կացվել ԼՂՀ դպրոցականների 2012-2013 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը՝ Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցի համապատասխան, Ստեփանակերտի N 3 միջնակարգ դպրոցում՝ 13 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն), պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց եկեղեցու պատմություն, նախնական գիմնադրական պատրաստություն), յուրաքանչյուր առարկայի հատկացնելով առանձին օր: Ըրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժնիները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել 337 դպրոցականների՝ անցած ուսումնական տարվա 315-ի փոխարեն: Ինչպես տեսնում ենք, մասնակիցների ընդհանուր քանակն աճել է:

ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ դպրոցականների 2012-2013 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների

1

Մասնակիցների քանակն ըստ շրջանների

Table with 5 columns: Շրջան, 2009-2010, 2010-2011, 2011-2012, 2012-2013. Rows include Արևիկյան շրջան, Մարտակերտի շրջան, Մարտունու շրջան, Հայրուբի շրջան, Շուշիի շրջան, Հատումյանի շրջան, Քաշաթաղի շրջան, and Ընդամենը.

Մասնակիցների քանակն ըստ առարկաների

Table with 5 columns: ՀՀ, 2009-2010, 2010-2011, 2011-2012, 2012-2013. Rows include Հայրց լեզու, Հայ գրականություն, Ռուսաց լեզու, Անգլերեն լեզու, Պատմություն, Աշխարհագրություն, Մաթեմատիկա, Ֆիզիկա, Բիոլոգիա, Կենսաբանություն, Ինֆորմատիկա, Հայրց եկեղեցու պատմություն, and Նախնական գիմն. պատրաստ.

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է ռուսաց լեզու (39-45), քիմիա (18-22), պատմություն (34-48), մաթեմատիկա (21-24), ֆիզիկա (4-8) առարկաներից:

Օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքները ստուգելու նպատակով կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ ԱրՊՀ համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների փորձառու ուսուցիչների մասնակցությամբ:

Գրավոր աշխատանքների ստուգումները բոլոր առարկաներից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել են, ներկայացվել նախարարին և նույն օրը տեղադրվել նախարարության www.edu.nkr.am կայքում: Բողոքարկման օրերին հանրապետական հանձնաժողովին դիմել են հայոց լեզու, պատմություն և մաթեմատիկա առարկաներից 11 մասնակիցներ, որոնց հնարավորություն է տրվել ծանոթանալու իրենց գրավոր աշխատանքներին: Հանրապետական առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից կատարվել է նաև որոշ գրավոր աշխատանքների վերստուգում, և արդյունքում գրավոր աշխատանքների միավորները փոխվել են հօգուտ աշակերտների: Փոփոխության մասին ևս տեղեկատվություն է տեղադրվել նախարարության վերոնշյալ կայքում:

Table with 3 columns: Առարկա, 1-ին տեղ, 2-րդ տեղ, 3-րդ տեղ. Rows include Հայրց լեզու, Հայ գրականություն, Ռուսաց լեզու, Անգլերեն լեզու, Պատմություն, Աշխարհագրություն, Մաթեմատիկա, Կենսաբանություն, Բիոլոգիա, Ֆիզիկա, Ինֆորմատիկա, Հայրց եկեղեցու պատմություն, and Նախնական գիմն. պատրաստ.

Վերջին չորս տարվա մրցանակային տեղերի քանակն ըստ առարկաների

Table with 5 columns: 2009-2010, 2010-2011, 2011-2012, 2012-2013. Rows include Հայրց լեզու, Հայ գրականություն, Ռուսաց լ. և գրական, Անգլերեն, Պատմություն, Աշխարհագրություն, Մաթեմատիկա, Ֆիզիկա, Բիոլոգիա, Կենսաբանություն, Ինֆորմատիկա, Հայրց եկեղեցու պատմություն, Նախնական գիմն. պատրաստ., and ԸՆԴԱՄԵՆԸ.

Հայ գրականություն, պատմություն, կենսաբանություն առարկաներից նախորդ տարվա համեմատ մրցանակային տեղերի քանակը մնացել է նույնը, իսկ հայոց լեզու, մաթեմատիկա և աշխարհագրություն առարկաներից մրցանակային տեղերը նվազել են: Մրցանակային տեղերի քանակն աճել է ռուսաց լեզու, անգլերեն լեզու առարկաներից և ընդհանուր առմամբ օլիմպիադայի արդյունքները գոհացուցիչ են:

Այսպես՝ հանրապետական փուլի արդյունքներով

Table with 5 columns: 2009-2010, 2010-2011, 2011-2012, 2012-2013. Rows include 4 աշ. գրավել են 1-ին տեղ, 10 աշ. գրավել են 2-րդ տեղ, 19 աշ. գրավել են 3-րդ տեղ, and 33 մրցանակային տեղ.

Չնայած մրցանակային տեղերի ընդհանուր քանակը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է ընդամենը 3-ով, բայց հաճելին այն է, որ աճել է մրցանակային առաջին տեղերի քանակը:

Այս տարի մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ պատմության (8 մրցանակային տեղ), օտար լեզու (8 մրցանակային տեղ), հայ գրականություն (6 մրցանակային տեղ), ռուսաց լեզու (6 մրցանակային տեղ) և ՆՁՊ (8 մրցանակային տեղ) առարկաներին:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ մրցանակային տեղերն աճել են Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում: Ուրախալի փաստ է նաև այն, որ այս ուսումնական տարում Քաշաթաղի շրջանն ունեցավ երկու, իսկ Շահումյանի շրջանը՝ մեկ մրցանակային տեղեր:

Ըստ շրջանների մրցանակային տեղերի քանակը

Table with 6 columns: Շրջան, 1-ին տեղ, 2-րդ տեղ, 3-րդ տեղ, ավելի քան մասնակից, մրց. տ. հսկող մ. 2012-2013. Rows include Արևիկյան, Անկերտի, Մարտակերտի, Մարտունու, Հայրուբի, Շուշիի, Քաշաթաղի, Հատումյանի, and Ընդամենը.

Այսպիսով՝ մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Ստեփանակերտի թիմը (26 մրցանակային տեղ), 2-րդ տեղում է Մարտունու թիմը (11 մրցանակային տեղ) և 3-րդ տեղում է Ասկերանի թիմը (7 մրցանակային տեղ): Ի դեպ, անցած ուսումնական տարում մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը դարձյալ կիսում էին Ստեփանակերտի, Մարտունու և Ասկերանի թիմերը:

Այս գոհացուցիչ փաստերի կողքին ուզում են կանգ առնել մեզ բոլորիս հուզող մեկ այլ հարցի վրա: Ինչո՞վ բացատրել, որ աշխարհագրություն առարկայի 22 մասնակիցներից միայն մեկին հաջողվեց գրավել 3-րդ տեղ, իսկ կենսաբանություն առարկայի 20 մասնակիցներից 2 հոգու հաջողվեց գրավել 3-րդ մրցանակային տեղ: Ավելացնեն նաև, որ այդ 20 հոգուց միայն 10 հոգի կարողացան հաղթահարել դրական 8 միավորային շեմը: Քիմիա առարկայի 22 մասնակիցներից միայն 2 աշակերտի է հաջողվել հավաքել դրական 8 միավոր: Մյուս առարկաներից «8» միավորային շեմը չկարողացան հաղթահարել

- հ.լեզու առարկայի 63 մասնակիցներից-10 աշակերտ

- հայ գրականություն առարկայի 24 մասնակիցներից- 5 աշակերտ
- ռուսաց լեզու առարկայի 45 մասնակիցներից- 2 աշակերտ
- մաթեմատիկա առարկայի 24 մասնակիցներից- 22 աշակերտ
- ֆիզիկա առարկայի 8 մասնակիցներից - 4 աշակերտ
- կենսաբանություն առարկայի 20 մասնակիցներից- 9 աշակերտ
- պատմություն առարկայի 48 մասնակիցներից- 17 աշակերտ
- աշխարհագրություն առարկայի 22 մասնակիցներից-17 աշակերտ



- ինֆորմատիկա առարկայի 4 մասնակիցներից- 3 աշակերտ
- քիմիա առարկայի 22 մասնակիցներից - 20 աշակերտ
- հայոց եկեղեցու պատմություն առարկայի 9 մասնակիցներից - 1 աշակերտ

- ՆՁՊ առարկայի 24 մասնակիցներից - 2 աշակերտ
Միայն օտար լեզու առարկայի 24 մասնակիցները կարողացան հաղթահարել դրական շեմը:

Այսինքն, դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 337 մասնակիցներից 112-ի գրավոր աշխատանքները (33%) առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից գնահատվել են 8 միավորից ցածր: Կարծում են, սրանք անհանգստացնող փաստեր են:

Այժմ կանգ առնենք հանրապետության տարածքում գործող 3 ավագ, 5 հոսքային և Ստեփանակերտի հ.3 ու ֆիզմաթ դպրոցների աշակերտների ինչպես մասնակցության, այնպես էլ ակտիվության հարցի վրա: Քանակական տեսանկյունից պատկերը հետևյալն է.

Table with 13 columns: Հայրց, Ի.լեզու, Ի.գրական, Ռուսաց, Անգլերեն, Պատմություն, Աշխարհագրություն, Մաթեմատիկա, Կենսաբանություն, Բիոլոգիա, Ֆիզիկա, Ինֆորմատիկա, Հայրց եկեղեցու պատմություն. Rows include Արևիկյան, Անկերտի, Մարտակերտի, Մարտունու, Հայրուբի, Շուշիի, Քաշաթաղի, Հատումյանի, and Ֆիզմաթ.

Իսկ որակական առումով վերոնշյալ դպրոցներում պատկերն այսպես է.

հայոց լեզու առարկայի 4 մրցանակային տեղերից միայն 1-ը բաժին հասավ ֆիզմաթ դպրոցի մասնակցին: Հայ գրականություն առարկայի 5 մրցանակային տեղերից 2-ը բաժին հասան Մարտակերտի հ.1 հոսքային, Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցների սաներին: Ռուսաց լեզու առարկայի 6 մրցանակային տեղերը զբաղեցրին Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ և հ.11 ավագ դպրոցների աշակերտները: Օտար լեզու առարկայի 8 մրցանակային տեղերից 7-ը բաժին հասան Ստեփանակերտի ֆիզմաթ, հ.11 ավագ, հ. 3 միջնակարգ, Մարտակերտի հ.1 և Ճարտարի հոսքային դպրոցների աշակերտներին: Պատմություն առարկայի 8 մրցանակային տեղերից 4-ը զբաղեցրին Ստեփանակերտի հ.8 և հ.11 ավագ, Ճարտարի հ.1 հոսքային և Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցների ներկայացուցիչները: Նախնական գիմնական պատմություն առարկայի 8 մրցանակային տեղերից միայն մեկը զբաղեցրեց Մարտունու հ.1 հոսքային դպրոցի մասնակիցը: Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաների բոլոր մրցանակային տեղերը գրավեցին ֆիզմաթ դպրոցի սաները: Կենսաբանություն, աշխարհագրություն և հայոց եկեղեցու պատմություն առարկաների մրցանակային տեղերից ոչ մեկը բաժին չհասավ ավագ և հոսքային դպրոցների սաներին:

ՕԼԻՄՊԻԱԴԱ

Վ Ե Ր Լ ՈՒ ՇՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԼՂՀ դպրոցականների 2012-2013 ուստարվա առարկայական
օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների

Հանրագումարի բերելով արդյունքները՝ ավագ, հոսքային
և 2 միջնակարգ (Ստեփանակերտի հ.3, և ֆիզմաթ) դպրոցների
մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար

դպրոցները,

Մարտակերտի հ.1 հոսքային, Հաթերքի միջնակարգ դա-
րոցները,

Մարտունու շրջանի ճարտարի հոսքային, Բերդաշենի,
Հերիերի, Գիշու միջնակարգ դպրոցները:

Այս տարի ևս օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փու-
լն անցկացվեց 3 օր, իսկ հանրապետական փուլում յուրա-
քանչյուր առարկայի հատկացվեց առանձին օր, ինչը հնարա-
վորություն տվեց աշակերտներին իրենց գիտելիքները ցու-
ցադրելու 2 և ավելի առարկաներից, ու այդ առումով Ստեփա-
նակերտ քաղաքի տարբեր դպրոցների 5 աշակերտների հա-
ջողվեց օլիմպիադայի հանրապետական փուլում տարբեր
առարկաներից գրավել մրցանակային տեղեր:

Նրանք են.

- Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփա-
նակերտի մասնաճյուղի 12-րդ դասարանի աշակերտ Յուրի
Սարգսյանը՝ անգլերեն լեզու և հայոց լեզու առարկաներից
գրավել է, համապատասխանաբար, 1-ին և 2-րդ տեղեր: Նույն
դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներ Սերգեյ Հայրապետյա-
նը ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից գրավեց 2-րդ մր-
ցանակային տեղ, իսկ Դավիթ Հարությունյանը մաթեմատիկա-
յից՝ 2-րդ, ֆիզիկայից՝ 3-րդ տեղ:

- Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի 11-րդ դասա-
րանի աշակերտուհի Անուշ Դավթյանը անգլերեն լեզու և ռու-
սաց լեզու առարկաներից գրավել է 2-րդ տեղ:

- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի
աշակերտուհի Լարիսա Գևորգյանը անգլերեն և ռուսաց լեզու
առարկաներից գրավեց 2-րդ տեղ:

Շնորհավորենք բոլոր 5 աշակերտներին և շնորհակալու-
թյուն հայտնենք նրանց՝ լավագույն արդյունքի հասնելու հա-
մար:

Ուզում են կանգ առնել ոչ պակաս կարևոր մեկ այլ փաստի
վրա: Մրցանակային տեղերի բաշխումից հետո արձանագր-
վեց, որ հանրակրթական դպրոցների 6 ուսուցիչների մեկից
ավելի աշակերտներ մրցանակային տեղեր են գրավել տար-
բեր առարկաներից: Այսպես.

- Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի
ուսուցչուհի Ջոյա Մարտիրոսյանի 4 աշակերտները գրավեցին
1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:

- Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի անգլերեն լեզվի ու-
սուցչուհի Հասմիկ Սեյրանյանի երեք սաները գրավեցին 1-ին և
2-րդ մրցանակային տեղեր:

- Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի տնօրեն, մաթեմատի-
կայի ուսուցչուհի Սուսաննա Ներսիսյանի երկու աշակերտնե-
րը գրավել են մրցանակային 2-րդ տեղ:

- Նույն դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Աշոտ Ապրեսյանի 3 սա-
ները գրավեցին 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:

- Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի հա-

Table with 10 rows and 11 columns. Columns include 'Կրթ. հ.', 'Կրթ. հ.', 'Հ. լեզու', 'Հ. օրակ.', 'Ռ. լեզու', 'Օր. լեզու', 'Ս. քաղ.', 'Ֆիզիկա', 'Քիմիա', 'Կենսա.', 'Պատմ.', 'Լեզու', 'Մ. քաղ.', 'Մրցանակ. փուլի տեղ. թիվ':

պարզևատրվածների քանակն ունի այսպիսի պատկեր.
Նկատելի է, որ 1-ին տեղում է ֆիզմաթ դպրոցը:
2-րդ տեղում է Ստեփանակերտի հ. 3 միջն. դպրոցը:
3-րդ տեղում է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցը:
Համեմատություն անցկացնելով հանրապետությունում
գործող երեք ավագ դպրոցների մասնակիցների օլիմպիադա-
յի հանրապետական փուլում ցուցաբերած արդյունքների
միջև, հանդիպում ենք անհանգստացնող փաստերի: Ինչո՞ւ



բացատրենք այն հանգամանքը, որ Ստեփանակերտի հ. 11
ավագ դպրոցն ունենալով բնագիտամաթեմատիկական հոս-
քի 9 և հունամիտարի հոսքի 11 դասարան-կոմպլեկտներ՝ 465
աշակերտների ընդգրկմամբ, օլիմպիադային մասնակցել է ըն-
դամենը 21 աշակերտ, որից միայն 5 հոգի կարողացան մրցա-
նակային տեղեր գրավել: Իսկ Մարտունու շրջանի Բերդաշենի
միջնակարգ դպրոցը (8 մասնակից), որտեղ սովորում է 236 աշ-
ակերտ և Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցը
(16 մասնակից), որտեղ սովորում է 210 աշակերտ, օլիմպիա-
դայում մրցանակային տեղեր գրավեցին 3-ական աշակերտ-
ներ:

Կամ ինչպե՞ս արդարացնենք հետևյալ փաստը, որ Ստե-
փանակերտի հ. 8 ավագ դպրոցը, որտեղ գործում են 5 բնագ-
իտամաթեմատիկական և 9 հունամիտարի հոսքի դասարան-
կոմպլեկտներ 309 աշակերտներով, օլիմպիադային մասնակ-
ցել է ընդամենը 7 աշակերտ, և նրանցից միայն մեկին է հաջող-
վել գրավել մրցանակային տեղ: Մեկ մրցանակային տեղ ու-
նեն նաև Ասկերանի շրջանի Խնածախի միջնակարգ դպրոցը
(70 աշակերտ), Խաչմաչի միջնակարգ դպրոցը (39 աշա-
կերտ), Շահունյանի շրջանի Ակնաբերդի միջնակարգ դպրոցը
(97 աշակերտ), Հաղորթի շրջանի Մարիամաձորի միջնակա-
րգ դպրոցը (61 աշակերտ), ինչպես նաև Քաշաթաղի շրջանի
Աղածորի և Վարդուտի միջնակարգ դպրոցները՝ համապա-
տասխանաբար 37 և 21 աշակերտներով:

Իսկ Շուշի քաղաքի Մուրացանի անվան ավագ դպրոցի 10-
12-րդ դասարաններում ընդգրկված 73 աշակերտներից օլիմ-
պիադայի հանրապետական փուլին մասնակցած 9 աշակերտ-
ներից ոչ մեկին չհաջողվեց մրցանակային տեղ գրավել: Կար-
ծում են, բոլոր ավագ դպրոցները խորհելու շատ բան ունեն:

Բայց այս ամենի կողքին հարկ է մշել հանրապետության
հանրակրթական այն դպրոցների անունները, որոնք յուրա-
քանչյուր տարի մեծ պատասխանատվությամբ են պատրաստ-
վում օլիմպիադային, և նրանց սաներն արդարացնում են ու-
սուցիչների հույսերը: Դրանք են.

Ստեփանակերտ քաղաքի հ. 1, 3 միջնակարգ և ֆիզմաթ
դպրոցները,
Ասկերանի շրջանի Նորագյուղի, Խաչմաչի միջնակարգ



յոց լեզվի և գրականության ուսուցչուհի Էլմիրա Գաբրիելյանի
2 սաները գրավեցին 1-ին և 3-րդ մրցանակային տեղեր:

Ուրախությամբ են ուզում մշել նաև այն մասին, որ մրցա-
նակային տեղեր գրաված ուսուցիչների շարքում հերթական
անգամ հանդիպում ենք Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի
ուսուցչուհի Հասմիկ Սեյրանյանի, հ. 3 միջնակարգ դպրոցի ու-
սուցչուհի Ջոյա Մարտիրոսյանի, Կարինե Աթաջանյանի,
Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանա-
կերտի մասնաճյուղի ուսուցիչներ Սուսաննա Ներսիսյանի, Աշ-
ոտ Ապրեսյանի, Ասկերանի շրջանի Խաչմաչի միջնակարգ դա-
րոցի ուսուցչուհի Աննա Ջիվանշիրյանի, Ասկերանի շրջանի
Նորագյուղի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Սիլվա Ենգի-
բարյանի, Մարտակերտի հ.1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
Նատաշա Պողոսյանի, Մարտունու շրջանի Բերդաշենի միջ-

նակարգ դպրոցի ուսուցչուհի Էլմիրա Գաբրիելյանի, Մարտու-
նու շրջանի Հերիերի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Արմե-
նուհի Գրիգորյանի, ճարտարի միջնակարգ դպրոցի ուսուցչու-
հի Լուսինե Սաֆարյանի անուններին և համոզված են, որ դեռ
էլի կհանդիպենք:

Վերլուծության ընթացքում ակնհայտ դարձավ ևս մեկ ու-
րախալի փաստ. ընթացիկ ուսումնական տարվա օլիմպիադա-



յի հանրապետական փուլի հաղթողների անվանացանկում կր-
կին հանդիպում ենք նախորդ տարիների մեր մրցանակակիր
աշակերտների անուններին: Նրանք են. Ստեփանակերտի հ.3
միջնակարգ դպրոցի աշակերտուհի Անահիտ Բաբայանը, Աս-
յա Առուստամյանը, ֆիզմաթ դպրոցից՝ Յուրի Սարգսյանը, Դա-
վիթ Հարությունյանը, Սամվել Միրզախանյանը, Նարեկ Միրզա-
յանը, Սերգեյ Հայրապետյանը, հ. 11 ավագ դպրոցի աշա-



կերտներ Տիգրան Վարդանյանը, Լարիսա Գևորգյանը, Լուսինե
Մարտիրոսյանը, Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ
դպրոցից՝ Արմինե Հայրապետյանը և Նադեժդա Գասպարյանը,
Խաչմաչի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Էլլարա Հայրա-
պետյանը, Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցի աշակեր-
տուհի Լիլիթ Հարությունյանը, Մարտունու շրջանի ճարտարի
հ.1 միջնակարգ դպրոցի աշակերտուհիներ Սրբուհի Այդինյա-
նը, ժենյա Հարությունյանը, Բերդաշենի միջնակարգ դպրոցի
աշակերտուհի Աստղիկ Սողոմոնյանը, Քաշաթաղի շրջանի
Աղածորի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Քրիստինե Ավո-
յանը: Ահա այն աշակերտները, ովքեր առանձնացան ոչ միայն
մրցանակային տեղեր գրավելու առումով, այլ նաև, որ նրանցից
13-ը, ինչպես անցյալ տարի, այս տարի ևս իրավունք
ստացան մասնակցելու օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի համ-
րապետական փուլի արդյունքներով, հանրապետական հանձ-
նաժողովի կազմկոմիտեի որոշմամբ 12 (բացի քիմիայից)
առարկաներից լավագույն արդյունք ցուցաբերած 49 աշակեր-
տի իրավունք տրվեց մասնակցելու նաև Հայաստանի Հանրա-
պետությունում մարտ, ապրիլ, մայիս ամիսներին անցկացվող
օլիմպիադայի եզրափակիչ փուլին: Հաջողություններ
մաղթենք բոլոր մասնակիցներին և սպասենք նրանց
լավագույն ակնկալիքներով:

Շնորհավորում և շնորհակալություն ենք հայտնում
օլիմպիադայի մրցանակակիր բոլոր աշակերտներին և դեպի
գիտելիք տանող ճանապարհը լուսավորող նրանց
ուսուցիչներին:

Ռ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
Կրթության և գիտության վարչության պետ

ՂԱՅՈՑ ԵՐԵՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՐԺԱՊԻՑՆԵՐԸ

1299թ. Օսմանի գլխավորությամբ թուրքերի՝ Փոքր Ասիա ներխուժելու պահից մինչև 1915 թվականն ընկած ժամանակաշրջանում, ինչպես թուրք ամհատ գործիչները (36 սուլթանները, փաշաներն ու վեզիրները), այնպես էլ նրանց կառավարական յաթաղանը նպատակ էին դրել, մեղմ ասած, հալածել Ասիայի Արևմտյան հողերում ապրող արմատական ժողովուրդներին՝ հայերին, հույներին, ասորիներին, բուլղարներին և այդ ճանապարհով ուժացնել նրանց, նախ՝ իրենց սկզբնական թուրքական մոլեռանդ կրոն հանդիսացած վահաբիզմին, իսկ հետո՝ մեծադողոր իսլամիզմին:

Բուն թուրքիայում Աբդուլ Համիդ հայատյացին փոխարինած երիտթուրքական գաղափարախոսները, որոնք 1908-1909 թվականներին իրենց իշխանությունը հաստատելու համար օգտագործեցին այլազգիների ուժերը, իշխանության գլուխ անցնելուց հետո ամեն կերպ փորձում էին միահծուլել Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին մեկօսմանյան ուղղության մեջ, որն իրականում գրկում էր այդ ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրավունքից:

Երիտթուրքերի ղեկավարները հետևողականորեն ջատագովում էին օսմանիզմի գաղափարները. որանք հպատակ ժողովուրդներին պահանջում էին հաշտվել իրենց իրավագուրվ փոխակի հետ և հրաժարվել իրենց իսկ ազգային ինքնորոշման ձգտումներից, նրանք չպետք է պայքարեն իրենց ազատագրության համար, քանի որ կայսրությունում տիրապետող կարգն առաջավոր ու իրեալական է: Իթքիհատի առաջնորդներից Ջեմալ Նուրին ամեն կերպ գովաբանում էր իսլամը՝ մատմուքելով, որ այն միաժամանակ բարոյական օրենսգիրք և կառավարման ձև է:

Թուրքական կառավարողների այդ քաղաքականության պատճառները տարբեր էին, բայց միշտ էլ այն, որ այդ փոքր ազգերն ու ժողովուրդները ավելի քաղաքակիրթ ու զարգացած են, որոնք իրենց ասելով ցավ կպատճառեն նվաճողներին: Նրանք դեռ չէին մոռացել Անգլիայի նախկին վարչապետ Գլադստոնի կողմից թուրքերին տրված այն գնահատականը, որը բովանդակում էր՝ «Թուրքերը նման չեն ոչ Յոնիաստանի հեզ մահմեդականներին, ոչ Սիրիայի ասպետ Սալահեդդիններին և ոչ էլ Իսպանիայի քաղաքակիրթ մավրերին: Ուր մտել են նրանք, այնտեղ թողել են արյունաներկ հետքեր, ուր հաստատել են իրենց տիրապետությունը, այնտեղ խեղդվել է քաղաքակրթությունը» (Ջոն Կիրակոսյան, «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», Երևան, 1938թ. էջ 32):

Երևի չեն մոռացել նաև Ֆ. Էնգելսի բնորոշումը մուսուլման, որ ասել է. «Հին դարերում թուրքերի առևտուրը քարվան կարել էր, իսկ նոր ժամանակներում՝ խաբեությունը» (Վ.Մարքս, Ֆ.Էնգելս, հատոր 1-ին, Հայաստան-հրատ, 1972թ., էջ 11): Կամ գրող Վիկտոր Հյուգոյի «Այստեղով թուրքն է անցնել» խայթող ու նաև մի ամհայտ գերմանացու՝ «Լավ թուրքը մեռած թուրքն է» սարկազմը:

Որ թուրքերը վախենում էին նվաճված ժողովուրդների զարգացածությունից և մտածում էին իրենց ապագա տխուր ճակատագրի մասին, երևում է թուրք մի մայրի գզուշավորությունից, որ գրել է այդ ազգերից մեկի՝ հայի մասին հետևյալը.

«Հայը առաջադիմակալն է, կրկրուրական հատկություններ ունի, հայը ջանասեր է, աշխատասեր, հայը քաջ է, խելոք, քաջ է հոգով ու մտքով, հայը այնքան նեղ ու դառը պայմանների մեջ անգամ կարողացել է եվրոպական քաղաքակրթությունը յուրացնել, պահպանել յուր եկեղեցին, կրոնն ու լեզուն: Հայը ստեղծեց ու զարգացրեց

մեր երկրի առևտրականությունը, ծաղկեցրեց մեր գրականությունը, նպաստեց մեր տպագրական արվեստի առաջադիմությանը, հայը նաև մի քանի անգամ փրկեց մեզ կատարյալ անկումից: Ուրեմն, այդ հայի վիճակը եթե բարելավենք, նրա հարստությունը թողնենք նրա ձեռքում, եթե ասպարեզ տանք գարգանալու, առաջադիմելու և աճելու, նա մի օր, ամենայն իրավամբ, կգա, կնստի մեր գլխին ու մեզ կասի՝ որովհետև դուք քաղաքակրթության ասպարեզում անընդունակ եք, որովհետև դուք ծանրությամբ արգելք եք դառնում մարդկային հասարակության ընդհանուր լուսավորության և առաջադիմության գործին, ուրեմն՝ դուք մեզ տիրապետելու, կառավարելու իրավունք չունեք, մենք ձեզ պիտի տիրապետենք ու կառավարենք... իսկ լուսավորության ավստով վարակված եվրոպան էլ ոչ միայն իրավունք կտա հային, այլև ուժ կտա, այլև կաջակցի նրան մեր գլխին տեր դառնալու գործին»: (Վալերի Գլեչյան, «9-րդ դասարանի նոր պատմության դասագիրք», Երևան, 1996թ. էջ 540):

Ուրեմն, ըստ այդ մայրի, ի՞նչ է հարկավոր կիրառել հայի նկատմամբ. նախ՝ նրան իրավազրկել, հարկերով ծանրաբեռնել, իսկ եթե դա չօգնի՝ սպանել, ոչնչացնել: Եվ անհարկաբար թուրքերի կառավարությունը դիմեց վերջինիս ցեղասպանությանը:

Արևմտահայության բնաջնջման ծրագրերը խարխվում էին նախորդ ժամանակներում սուլթանական թուրքիայի գործադրած ջարդարական քաղաքակրթության վրա՝ դեռևս 1878թ. Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային և կրոնական հավանաբանները, կյանքի և գույքի ապահովագրությունը, հարկային ծանր լուծն ու զավառային պաշտոնյաների չարաշահումներն ավելի մեծ չափերի հասան, խիստ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակչությունները:

Այդ պահից սովորություն դարձան աքսորը, կալանքները, նույնիսկ «Հայաստան» բառի, Հայաստանի պատմությանը և աշխարհագրությանը վերաբերող անունների հիշատակությունը: Հենց այդ նույն ժամանակներում կայսրության գործիչները թե՛ իրենց և թե՛ կառավարության անունից համար դես էին գալիս հայտարարություններով, որոնցից հատկանշական է երկրի մեծ վեզիր Զյամիլի փաշայի հայտարարությունը: Նա ասում էր. «Հայ ազգը վերացնելու անհետև և անհետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ անելու համար բան չի պակսիլ մեզ, ամեն գործիք պատրաստ ունենք՝ բուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ կրոնական պատերազմը մեզ կիրառարակենք և ոչորին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ գեներալներ, երբ ընդհակառակը, մենք գեներալներին, գեներալներին, հնարավորություն է տվել և պաշտպանել հայաչինջ ծրագիրը: Նրա հյուպատոսները խրախուսել, իսկ սպանելը մասնակցել են թուրքիայի վարչապետներին: Մեծ պետություններից ոմանք էլ՝ Ֆրանսիան, Ռուսաստանը և նույնիսկ Անգլիան ու ԱՄՆ-ը, բավարարվել են թուրքիային 1915թ. օգոստոսին մի նախագրուշացում հայտարարելով: Բայց հակառակ Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող և Վերսալյան պայմանագրի միջոցով «Արջի մորթին կիտող» գիշատիչ մեծ երկրների ղեկավարների, որոնք հանդիսացան հայկական եղեռնը խրախուսողներ, որոշ առումով նույնիսկ կազմակերպիչներ, Առաջին աշխարհամարտից հետո աշխարհի առաջադեմ մարդկությունը պահանջում էր

օգնություն ակնկալելու, դա իրոք արդարացավ: Դեռ ավելին, հայերի իրավագրությունը Թուրքիայում պահպանելու և նրան պետություն ճանաչելու հարցում իր խանգարիչ դերը Անգլիան ցուցադրել էր դեռևս 1877-1978թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքները վերանայած Բեռլինի վեհաժողովում, որի առթիվ իր դժգոհությունն էր արտահայտել հայ մեծամուսններից Գրիգոր Արծրունին, որն ասել է. «Եթե Անգլիան խաբեց թուրքիայի պես մի գորեղ պետության, որքան ավելի հեշտ է նրան խաբել հայերի պես մի փոքր ազգությամբ»:

Պետք է հիշել, որ հենց Անգլիայի այն ժամանակվա ԱԳ նախարար Սոլսբերիի շուրջերից է դուրս թռել «Հայաստանի լեռները խիստ բարձր են, և թվառ զոհերի աղաղակների արծազանքը Եվրոպային չհասած, խեղդվում է Եփրատի հովտի մեջ: Այդ լեռները խանգարում են մեր նավերին՝ հասնելու հայերին» բառերը: Այստեղ խոսքը Աբդուլ Համիդի կողմից 1984-1995թթ. հայկական կոտորածներին է վերաբերում:

Հենց նա չպետու տվեց այն ժամանակվա թերթերից մեկի գնահատականը Անգլիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ, հատկապես հայերի առումով, որը գրում էր. «Անշուշտ, Անգլիան, որ ամբողջ Եվրոպա կողողեր «իմ շահերը, իմ շահերը» աղաղակելով, վախենում էր Ռուսաստանի ազդեցությունը հայերի միջոցով մեծանա Փոքր Ասիայում»: Անգլիական ղեկավարներից Լյոյդ Բորդը չէր թաքցնում, որ անգլիական կառավարությունը հայկական հարցն օգտագործում է միայն Ռուսաստանի դեմ պայքարի և թուրքիայում իր դիրքերը ամրապնդելու համար:

Հայոց եղեռնի գլխավոր շարժանքը հանդիսացավ Առաջին աշխարհամարտը: Երիտթուրքերի պարազուկները գտնում էին, որ համաշխարհային այդ պատերազմը կլիճի աշխարհը, կզբաղեցնի աշխարհի մեծ ու փոքր պետություններին ու ժողովուրդներին, որը և հնարավորություն կտա թուրքիային հայերի տեղահանությունների պատրվակով իրականացնել այդ մեծ կոտորածը: Իթքիհատի առաջին գործողությունը եղեռնի ուղղությամբ հանդիսացավ նախ հայ զինվորականներին զինաթափ անելը և երկրորդ՝ 1915թ. ապրիլի 24-ին հայ մտավորականներին, այդ թվում և թուրքական մեջլիսի հայ պատգամավորներին աքսորելը ու ճանապարհին նրանց բնաջնջելը: Եվ պատահական չէ, որ հենց ապրիլի 24-ը հայերի, ինչպես նաև աշխարհի շատ ժողովուրդների կողմից նշվում է որպես որպես Հայոց եղեռնի օր:

Հայոց եղեռնի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի օրինակ է ցուցաբերել ոչ միայն Անգլիան: Օրինակ՝ Գերմանիան, որն Առաջին աշխարհամարտում թուրքիայի դաշակիցն էր, հանցավոր էր 1915թ. հայկական ջարդերի համար: Հայտնի է, որ 1915թ. հուլիսի 4-ին թուրքական կառավարությունը հնարավորություն է տվել և պաշտպանել հայաչինջ ծրագիրը: Նրա հյուպատոսները խրախուսել, իսկ սպանելը մասնակցել են թուրքիայի վարչապետներին:

Մեծ պետություններից ոմանք էլ՝ Ֆրանսիան, Ռուսաստանը և նույնիսկ Անգլիան ու ԱՄՆ-ը, բավարարվել են թուրքիային 1915թ. օգոստոսին մի նախագրուշացում հայտարարելով:

Բայց հակառակ Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող և Վերսալյան պայմանագրի միջոցով «Արջի մորթին կիտող» գիշատիչ մեծ երկրների ղեկավարների, որոնք հանդիսացան հայկական եղեռնը խրախուսողներ, որոշ առումով նույնիսկ կազմակերպիչներ, Առաջին աշխարհամարտից հետո աշխարհի առաջադեմ մարդկությունը պահանջում էր

ԽՈՍՔ ԵՐԱՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Ասում են՝ թե ուզում ես շուրջբուրդ բարի լինի, ինքը բարին գործիր...

Հի մեռնի այն ժողովուրդը, որ Ձեզ նման բարեգործ ունի: Ցանում եք բարիք՝ ակնկալելով հուսալի ապագա, ապագա, որի հիմքը դպրոցն է՝ անձի մտավոր-հոգևոր արժեքների ձևավորման ամենախոշոր գործոնը, իսկ թե ինչպես է հատուցանում այդ անձը՝ վաղվա քաղաքացին, կախված է ինչպես առանձին անձանց ուժերի լարումից, այնպես էլ ողջ ժողովրդի հոգու եռքից:

Երևանի պետական համալսարանին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 9-րդ «բ» դասարանի աշակերտ Տիգրան Դուկասյանի ծնող, ԼՂՀ 2-րդ նախագահ Արկադի Արշավիրի Դուկասյանը վերջերս ձեռնարկեց անուրանալի բարեգործություն: Նա, ստանձնելով ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի մասնակի վերանորոգման ծրագրի իրականացման գործը, իր ստացած պարգևավճարից դպրոցին է հատկացրել 4 մլն ՀՀ դրամ:

Նշված գումարը ծախսվել է դպրոցական շենքի աջ և ձախ կողային մասերի՝ վթարային վիճակում գտնվող պատուհանները (1-3-րդ հարկը ներառյալ) և գրադարանի ու ճաշարանի մեկական ապակյա պատերը (ընդհանուր մակերեսը՝ մոտ 90քառ. մ) նոր՝ ժամանակակից եվրոպատուհաններով փոխելու համար:

Հարգարժան պարոն Դուկասյան, դպրոցի ողջ մանկավարժական ու աշակերտական կուլեկտիվները, ամօսմանը դպրոցի տնօրեն Ս. Ներսեսյանը իրենց երախտագիտությունն են հայտնում Ձեզ: Մենք մեր ուժերի գերագույն լարումով ամեն ինչ կանենք, որպեսզի կրթօջախն ըստ արժանվույն ծառայի իր որդեգրած առաքելությանը՝ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության պատասխանատու գործին:

Երախտապարտ ենք, որ աստար եք կանգնել և Ձեր աջակցությունն եք բերել դպրոցի բարգավաճման սուրբ գործին:

Թող Աստված իր օրհնության ներքո մշտական հաջողությունների մեջ պահի ու պահպանի մեր ժողովրդի գավակներին:

Փառք ու պատիվ քրիստոնյա Արցախին և նրա՝ Ձեզ նման բուրդ բարեգործներին, հաջողություններ Ձեր բուրդ ազնիվ մտահղացումներին և ազգամայաստ ձեռնարկումներին:

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփ. մասնաճյուղի մանկավարժական կուլեկտիվ

Միջայել Բեգլարյան
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ,
ԼՂՀ վարչապետի
մանկավարժ, Գ. Քարահունջ

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀԱՅՐԵՆԱՆՎԻՐՈՒՄԻ ԴԱՍ



Ք ա շ ա թ ա ղ ի 2 ը ջ ա ն ի Տ ի գ ռ ա ն ա վ ա ն ի մ ի ջ ն ա կ ա ղ ա ղ դպրոցի արհուրթյան դ ա ս ե թ ի ն անդրադարձել ենք մեր թերթի նախորդ հ ա մ ա Ր Ն Ե Ր Ո Ւ Մ : Ասվել է, որ դպրոցը վերցրել է արհուրթյան դասերը հ ե թ ո ս ն ե թ ի անունները կրող զ ո ղ ա մ ա ս ե թ ը լ մ ա ճ կ ա ճ Ե Ղ Ո Ւ ուղեները: Եվ ահա հերթական դասը

ապրիլի 8-ին՝ 33 ազգային հերոս, Արցախի հերոս Յուրա Պողոսյանի ծննդյան 52-րդ տարեդարձի օրը, անցկացրին հերոսի անունը կրող՝ Ստեփանակերտի վերանորոգման-վերակառուցման գումարտակում:

Այստեղ էին հերոսի ընտանիքի անդամները, հարազատները, մարտական ընկերները մտակա հ. 6 հիմնական դպրոցի աշակերտներ՝ տնօրենի և ուսուցիչների հետ, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ՌՀ, ՖԴ, ՀԿԿԿ բաժնի պետ Վալերի Գրիգորյանը: Միջոցառումն անցկացվեց գումարտակի հրապարակում, դեսանտի մարտական մեքենա-հուշարձանի՝ Յու. Պողոսյանի մարտական մեքենայի մոտ: Այստեղ նաև հուշաքարեր կան գումարտակի զոհված տղաների անուններով: Նախ կատարվեց ծաղիկների տեղադրում: Հանդիսավոր միտինգը բացեց գումարտակի հրամանատար, գնդապետ Վարուժան Գևորգյանը: ԱՀՏԱ գծով հրամանատարի տեղակալի պաշտոնակատար, լեյտենանտ Յուրա Պողոսյանի ելույթը հերոսի անցած ուղու, նրա սխրանքների մասին և մեկ անգամ այն ճշմարտության հաստատումն է, որ մեծարժան խոսքերն առավել շատ պետք են ապրողներին, քանզի նահատակների կյանքով ապրելը տանում է դեպի ինքնամարտ:

Ուսումնական դասակի կուրսանտ Միհրան Հովհաննիսյանը համոզված է, որ Յու. Պողոսյանն այսօր էլ իր ոգեղեն ներկայությամբ շարունակում է իր ընթացքը հայկական պետականության ամրապնդման, ազատագրված հայրենիքի շենքման գործում:

6-րդ դպրոցի աշակերտների մեծարժան խոսքը հայրենասիրական չափածո տողերով ու երգերով յուրատեսակ երդում էր հերոսի գործը շարունակելու: Տիգրանավանի Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանի (Պետո) անվան դպրոցի աշակերտներն իրենց ուսուցիչների հետ՝ տնօրեն Ելյա Միրզոյանի գլխավորությամբ, բավական հեռավոր էին: Աշակերտները լավ սերտել են հերոսի կյանքի ուղին նրա մասին գրվածքներով և կարողացան ներկայացնել արտահայտիչ կերպով: Ակամայից ուզում էիր տեսնել հարազատների՝ կնոջ՝ Անժելայի, քրոջ՝ Իրայի, որդու՝ Սամվելի դեմքի արտահայտությունը: Ցավի ու տխրության հետ միասին ուրախության կայծերն էլ նկատելի էին նրանց աչքերում, քանզի հերոս ամուսնու, եղբոր, հոր կյանքի նվիրաբերումն իզուր չի անցել. արժանի հետնորդներ են գալիս, որոնք բարձր են պահում ազատամարտի հերոսների՝ ի դեմս Յու. Պողոսյանի, հիշա-

տակն ու անունը, որոնց համար կյանքի դաս է նրանց անցած ուղին:

Ապրեց ընդամենը 31 գարուն և, չնայած կարճ մարտական կենսագրությանը (զոհվեց 1992թ. հունիսի 12-ին), նրա՝ որպես մարտու, հրամանատարի ու զինվորի ապրած կյանքը մի իրական լեգենդ է, որ կատարվի դարեր շարունակ՝ որպես դաս հայրենասիրության ու հայրենամոլության:

Տիգրանավանցիները շարունակեցին հոգևոր առնչությունը հերոսի հետ՝ այցելելով նաև նրա գերեզման, լուռ խնկարկելով հերոսի հիշատակը: Հաջորդ վայրը նրա տունն էր, նախ՝ արհեստանոցը, որը յուրատեսակ թանգարանի է վերածվել: Երեխաները մոտիկից տեսան ավտովերանորոգման այն արհեստանոցը, որը փաստորեն դարձել էր Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին զինանոցը, որտեղ ուսումնական հրացաններն ու սովորական երկաթը Յուրայի ձեռքում դառնում էին իսկական զենք, որի առաջին փորձարկողն էլ հենց ինքն էր: Իսկ տանը հարազատների ու մարտական ընկերների հետ միասին երեխաներին հյուրընկալեցին Յուրայի ծնողները՝ Վաղարշակ քեռին և տիկին Վերան: Հերոսի



ծննդյան օրը մշտեցին միասին: Ծնողի համար զավակի թափուր տեղը, իհարկե, ոչ ոք չի կարող լրացնել: Ափսոսելիս այն է, որ նա ապրում է բոլորի մեջ, քանզի նրան ոչ միայն հիշում, մեծարում են, այլև իր հայրենասիրությամբ նա շարունակում է վարակել նոր սերունդին և դարձել է ճիշտ ապրելու խորհրդանիշ: Հիրավի, հայրենիքի համար մեռնել՝ նշանակում է ապրել սերունդների հիշողության մեջ:

Կարելի է ասել, այդ օրը ուխտագնացություն էր սիրահանվածների համար: Նրանք եղան նաև զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարաններում: Իսկ տունդարձին այցելեցին Շուշիի Սուրբ Դավանչեցոց եկեղեցի: Շատերն առաջին անգամ էին լինում Ստեփանակերտում և Շուշիում, և այդ այցելությունները նաև հայրենագիտական նշանակություն ունեցին:

Տիգրանավանցի դպրոցի աշակերտական և մանկավարժական կոլեկտիվները տնօրեն Ելյա Միրզոյանի գլխավորությամբ, իրենց երախտագիտությունն են հայտնում Ստեփանակերտի «Ջրմուկ-կոյուղի» ՓԲԸ տնօրեն, Յու. Պողոսյանի մարտական ընկեր Մարտիկ Հայրապետյանին և «Գլուխ արանս սերվիս» ընկերության տնօրեն Վաղմիր Թախտաչյանին՝ արիության դասը կազմակերպելուն աջակցելու համար:

Ս. ԽԱՀՏՐՅԱՆ

ՀԱՐԹԵՅ ԱՂԱՋՈՐԻ ԴՊՐՈՅԸ

Հանրակրթական դպրոցներում կարևորվում է դպրոցական ծրագրերից դուրս միջոցառումների անցկացումը: Այս առումով ԼՂՀ ԿԳ նախարարությունը կազմակերպել է Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված «Բրեյն-ռիզ» ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Ապրիլի 10-ին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնից Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում անցկացրեց մրցույթ-փառատոնի շրջանային փուլը՝ Քաշաթաղի հանրակրթական 9 դպրոցների 9-12-րդ դասարանցիների միջև: Ըստ կանոնակարգի՝ մրցույթ-փառատոնը կազմված էր երկու փուլից: առաջինում՝ 15 հարց, երկրորդում՝ 10, յուրաքանչյուրը գնահատվում էր 1 կան 0,5 միավոր: Հանձնախմբի կազմում էին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, ֆինանսատնտեսական վարչության պետ Հարություն Բերբերյանը, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը: Հարցաշարը նվիրված էր Արցախի պատմությանը: Մրցույթն անցկացրեց հարցաշարը կազմող՝ կրթության բաժնի առաջատար մասնագետ Ավարդ Սարգսյանը, ով տեղեկացրեց, որ այն դպրոցներն են մասնակցում մրցույթին, որտեղ 9-12-րդ դասարաններում 10 և ավելի աշակերտներ կան: Նախատեսվել էր 12 թիմ, սակայն 3 դպրոց որոշ պատճառներով չմասնակցեցին: Այնուամենայնիվ, 9 դպրոց՝ Բերձորի հ. 1 («Հագարի») և հ. 2 («Ջարթոն»), Հայկազյան («Որոտան»), Վան («Վանեցիներ»), Աղածոր («ԱՍՍԱ»), Արտաշավի («Տիգրանակերտ»), Գետամեջ («Օրխիստինե»), Այգեհովիտ («Արցախի արծիվներ»), Միջնավան («Արաքս»), մասնակցեցին, և կայացավ գեղեցիկ մրցակցություն: Յուրաքանչյուր 5 հարցից հետո հայտարարվում էր արդյունքը: Ընդմիջումների ընթացքում զրուցում էին մասնակից թիմերի աշակերտներին հետ: Աղածորի դպրոցի սաները միատեսակ շապիկներով էին՝ «ԱՍՍԱ» մակագրությամբ: Լավ էին նախապատրաստվել մրցույթին. դիմում են թիմի ավագ, 10-րդ դասարանցի Քրիստինե Ավրամյանը՝ ինչո՞ւ են իրենք թիմը կոչել ԱՍՍԱ: Պատասխանում է՝ այդպես որոշեցին խմբով, քանի որ «ԱՍՍԱ»-ն 20-րդ դարի 2-րդ կեսին մեծ դեր ունեցավ մեր պատմության մեջ: Քրիստինեն որոշել է իրավաբան դառնալ: Ասում է՝ եկել են հաստատ հարցերու ակնկալիքով: Նույն են ատում նաև Բերձորի Վ. Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգի «Ջարթոն» թիմի աշակերտները: Հավատում են, որ մեր շրջանը գարթոնք է ապրելու, և այդ պատճառով են թիմն այդպես կոչել: Արտաշավիի «Տիգրանակերտ» թիմի ավագ Գոռ Ամիրջանն ասաց, որ շատ են գնահատում Սեն Տիգրան արքային, այդ պատճառով են այդպես կոչվում: Ինքն ու Միեր Կիրակոսյանը որոշել են դառնալ պատմաբան: Գետամեջի դպրոցի թիմի ավագ Լիլիթ Ծառուկյանը և Թովմաս Առաքելյանը բացատրում են, որ իրենց անվանումը՝ «Օրխիստինե», Արցախի անվանումներից է՝ հիշատակված Ստրաբոնի մոտ: Այգեհովիտի «Արցախի արծիվներ»-ը գտնում են, որ իրենք ևս հայրենիքի պաշտպան են, պահում են ազատագրված պատմական մեր տարածքները. արծիվներ են:



Երկրորդ փուլում էլ է ավարտվում, հանձնախմբումը հայտարարում է արդյունքները: Առաջին տեղում է Աղածորի «ԱՍՍԱ»-ն՝ 23 միավոր, երկրորդ՝ Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգի «Հագարի»-ն՝ 15,5 միավոր. թիմը նաև միատեսակ շապիկներով ստացավ ՄՍԵ բաժնի կողմից: Միջնավանի «Արաքս» և Արտաշավիի «Տիգրանակերտ» թիմերը հավասար՝ 15 միավորով կիսեցին 3-րդ տեղը: Առաջին տեղ նվաճած «ԱՍՍԱ»-ն իրավունք ստացավ մասնակցել հանրապետական փուլին, նաև արժանացավ շրջվարչակազմի պատվոգրին և որպես հուշանվեր ստացավ Քրոնքի ժայռափոր եկեղեցու լուսանկարը: Պատվոգրի արժանացան նաև 2-3-րդ տեղեր գրավածները: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը տեղեկացրեց, որ մրցույթից առաջ տեղի ունեցած տեղական և հանրապետական տարբեր միջոցառումներում մեր շրջանի մի խումբ աշակերտներ արժանացել են պատվոգրերի: Ընորհակալություն հայտնեց մասնակից դպրոցներին՝ հույս հայտնելով, որ Աղածորի «ԱՍՍԱ»-ն հաղթող կլինի նաև ապրիլի վերջին կայանալիք հանրապետական փուլում:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԷԷՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

Այս տարվա գարնանային արձակուրդը տարբերվեց հետաքրքրություններով լի ճանապարհորդությամբ դեպի Հայաստանի պատմամշակութային հուշարձանները:

Գաղափարը Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանին էր: Չորս օրվա ընթացքում հնարավորություն ունեցանք լինելու Գառնիում, Գեղարդում, Ծիծեռնակաբերդում, Եռաբլուրում, Եջմիածնում, Մատենադարանում, քանդակարաններում:

Ճանապարհորդության սկիզբը եղավ Ստեփանակերտի Սուրբ Հակոբոս եկեղեցին, որտեղ ստացանք Տեր Մինաս քահանայի օրհնությունը և ճանապարհվեցինք:

Առաջին կանգառը Գրիսումն էր, այնտեղ այցելեցինք Ալսեյ Բակունցի տուն-թանգարան: Ճանապարհին եղանք նաև Նորավանքում, այնուհետև այցելեցինք Պ.Սևակի տուն-թանգարան, որտեղ լսեցինք ձայնագրված բանաստեղծությունները հեղինակի կատարմամբ: Թանգարանի պատերն անգամ խոսում են մեծն Սևակի կյանքի ու գրական գործունեության մասին:

Արարատում կանգ առանք սպարապետ Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանում: Այնքան տպավորված էինք, որ դժվարանում ենք բառերով պատմել մեր զգացածը:

Երևանում իջևանեցինք «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, որտեղ մեզ հյուրըն-

կալեցին շատ ջերմ: Ուրբաթ օրը նրանց պետք է հյուր զար կոնսպորտոր Ռոբերտ Ամիրխան-



յանը երգչուհի Սեդա Ամիր-Կարայանի հետ: Մեզ էլ հրավիրեցին մասնորոշի համերգին, որից մեծ բավականություն ստացանք:

Հինգշաբթի օրը եղանք Եջմիածնի մայր տաճարում, մտանք նաև զանազան: Այնուհետև գնացինք մեծն Մաշտոցի գերեզմանա-

վայր՝ Օշական: Եղանք Չարենցի կամարի տակ և նորովի ընկալեցինք նրա վրա գրված տողերը. «Ինչպես անհաս փառքի ճամփա են իմ Մասիս սարն են սիրում...»:

Այցելել ենք նաև Չարենցի տուն-թանգարան: Մենք մի մեծ կարոտ առանք, քանզի Չարենցի դպրոցի դասավարդներս մի ուրիշ ջերմություն զգացինք, կարծես մեր օջախում էինք:

Մարտի 23-ին մեր ծրագրած վայրերից մեկն էր Թունանյանի տուն-թանգարանը: Աննկարագրելի պահ էր: Այդ օրը Ամենայն հայոց բանաստեղծի մահվան 90-ամյա տարելիցն էր:

Շատ մեծ բավականություն ստացանք՝ շրջելով թանգարանում, ավելի մոտիկ ծանոթացանք և զգացինք մեծն Թունանյանին, իմացանք նաև, որ բանաստեղծն աշխարհում երրորդն է իր գրադարանով՝ Գյոթե, Տոլստոյ, Թունանյան...:

Հյուրասենյակում հոգեհաց էր մատուցված, մենք էլ մասնակցեցինք այդ արարողակարգին և վերջում դիտեցինք փոքրիկ ֆիլմ բանաստեղծի մասին:

Այցելեցինք Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ և մեր հարգանքի տուրքը մատուցեցինք: Մենք

պարտավոր ենք լինել այս վայրերում, որովհետև այդ ամենը տեսնելուց հետո ինքնամաքրման պահեր ենք ապրում:

Հետդարձի ճանապարհին (կիրակի, Ծաղկազարդի տոնն էր) մտանք Խոր Վիրապի վանք, մասնակցեցինք սուրբ պատարագին, ստացանք ուռնու օրհնված ճյուղեր, որից հետո բարձր տրամադրությամբ, պակաս հյուսելով շարունակեցինք տունդարձի ճանապարհը:

Չնայած բոլորս էլ եղել ենք երևանում, բայց հնարավորություն չենք ունեցել այցելել մասն վայրեր: Այժմ մենք, տեսնելով այդ ամենը, ավելի մոտ եղանք մեր հայրենիքին ու իմաստալից քերտով ենք մայրում մեր պատմությանը:

Բացի այն, որ ճանաչեցինք մեր հայրենիքը, ճանաչեցինք նաև ինքներս մեզ: Որովհետև այդքան երկար ժամանակ և այդքան մոտիկից իրար հետ չէինք շփվել:

Ընորհակալություն տիկին Գրիգորյանին՝ նման գեղեցիկ ու բովանդակալից նախածեռնության համար, շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցեցին և կազմակերպեցին մեզ համար անչափ կարևոր ու պարտավորեցնող ուխտագնացությունը:

Ստեփ. Ե. Չարենցի անվ. հ. 7 հիմն. դպրոցի մասնակից դասավարդներ

ՇԵՏԱՔՐՈՒՆԱՐԺ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՄՈՉԱԿԱՆ ԲԱՌԱԿՈՒՄՆԵՐ

Մաթեմատիկական քառակուսիների թեման հետաքրքրաշարժ մաթեմատիկայի ավանդական բաժիններից մեկն է, որը հետաքրքրասեր ընթերցողին ներկայացնում է ինչպես գեղեցիկ կառուցվածքներ, այնպես էլ չլուծված լուրջ պրոբլեմներ:

$n \times n$ չափանի մոզական կամ կախարդական քառակուսի կոչվում է այն քառակուսային աղյուսակը, որը լրացված է n^2 թվերով այնպես, որ թվերի գումարները յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր սյունում և երկու անկյունագծերում լինեն իրար հավասար: Եթե ուղղանկյան միայն տողերի և սյունների թվերի գումարներն են հավասար, ապա ուղղանկյուն անվանում են կիսամոզական: Մոզական քառակուսին անվանում են նորմալ, եթե այն լրացված է 1-ից մինչև n^2 թվերով: Մոզական քառակուսին անվանում են ասոցիատիվ կամ սիմետրիկ, եթե քառակուսու կենտրոնի նկատմամբ սիմետրիկ դասավորված ցանկացած երկու թվերի գումարը հավասար է $n^2 + 1$: Նորմալ մոզական քառակուսիներ գոյություն ունեն բոլոր կարգի n -երի համար, բացառությամբ $n=2$, չնայած $n=1$ դեպքը ակնհայտ է՝ քառակուսին կազմված է մեկ թվից: Փոքրագույն մոզական քառակուսին ունի երրորդ կարգ: Թվերի գումարը յուրաքանչյուր տողում, սյունում և երկու անկյունագծերում անվանում են մոզական հաստատուն՝ M : Նորմալ կախարդական քառակուսու մոզական հաստատունը կախված է միայն n -ից և որոշվում է

$$M(n) = \frac{n(n^2 + 1)}{2}$$

բանաձևով: Մոզական հաստատունի առաջին արժեքները բերված են հետևյալ աղյուսակում:

n	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
$M(n)$	15	34	65	111	175	260	369	505	671	870	1105

Այստեղ փոքրագույն մոզական քառակուսու կառուցման դասական խնդիրը: Խնդիր: 1-ից մինչև 9-ը թվերը դասավորել 3×3 չափերով քառակուսու վանդակների մեջ այնպես, որ երեք թվերի գումարը բոլոր՝ ուղղահայաց, հորիզոնական և անկյունագծային ուղղություններով լինի հավասար:

Լուծում: Ենթադրենք տրված թվերը դասավորել ենք ըստ պահանջվող պայմանի՝

a	b	c
d	e	f
g	h	i

Այդ դեպքում պետք է տեղի ունենան հետևյալ հավասարությունները.

$$\begin{aligned} a + b + c &= d + e + f = g + h + i = \\ a + d + g &= b + e + h = c + f + i = \\ a + e + i &= c + e + g = M \end{aligned}$$

M -ը մոզական քառակուսու հաստատունն է: Որպեսզի հաշվենք այն, նկատենք, որ

$$\begin{aligned} 3M &= a + b + c + d + e + f + g + h + i = \\ &= 1 + 2 + 3 + 4 + 5 + 6 + 7 + 8 + 9 = 45 \end{aligned}$$

Այստեղից՝ $M = 15$:

Այժմ գտնենք կենտրոնական e տարրը: Դրա համար դիտարկենք հետևյալ չորս գումարները՝ կենտրոնական, ուղղահայաց, հորիզոնական և անկյունագծային: Կունենանք՝

$$4M = a + e + i + b + e + h + c + e + g + d + e + f = (a + b + c) + (d + e + f) + (g + h + i) + 3e = 3M + 3e$$

Այստեղից՝ $e = M/3 = 5$

Նախքան անհայտների քանակի փոքրացնելը, կատարենք ևս մեկ դիտարկում: Գումարենք նույն զագաթից ելնող հորիզոնական, ուղղահայաց և անկյունագծային տողերը: Կունենանք՝

$$\begin{aligned} 3M &= (c + b + a) + (c + e + g) + (c + f + i) = \\ &= (a + b + c) + (d + e + f) + (g + h + i) + 2c - h - d = \\ &= 3M + 2c - (d + h) \end{aligned}$$

Այստեղից՝ $d + h = 2c$

Հետևաբար՝ $(d + h)$ -ը զույգ թիվ է:

Ստացվում է, որ քառակուսու բոլոր անկյուններում տեղավորված թվերը բոլորը կամ զույգ են կամ բոլորը՝ կենտ: Բայց այդ թվերը չեն կարող կենտ լինել, քանի որ նույն տողում, կամ սյունում կամ անկյունագծում կհայտնվեն 7 և 9 թվերը, որոնց գումարը մեծ է 15-ից: Հետևաբար, անկյուններում ունենք զույգ թվեր, իսկ կողմերի վրա՝ կենտ թվեր:

Այժմ արտարտենք անհայտները, կունենանք՝

a	b	c
d	5	$10-d$
$10-c$	$10-b$	$10-a$


Քառակուսու անկյուններում զույգ թվերի տեղադրումը կատարվում է միարժեքորեն՝ պատման և անդրադարձման ճշտությամբ: Եթե որևէ անկյունում տեղավորենք 2 թվանշանը, ապա հակառակ անկյունում կհայտնվի 8-ը: Մնացած երկու զագաթներում կտեղավորվեն 4-ը և 6-ը:

2	b	4
d	5	$10-d$
6	$10-b$	8

Այժմ միարժեքորեն տեղադրվում են և կենտ թվերը՝

2	9	4
7	5	3
6	1	8

Այսպիսով, մենք ստացանք մարդկությանը հայտնի ամենապարզ և ամենահին մոզական քառակուսին: Ըստ չինական աղբյուրների՝ այն գծված էր սուրբ կրիայի գրահի վրա (նկ.1):



Նկ.1. Լո Շուի պատկերը Մին դարաշրջանի գրքում

Ալբրեխտ Դյուրերի «Մելանքոլիա» փորագրության վրա պատկերված 4×4 մոզական քառակուսին (նկ.2) համարվում է ամենավաղը եվրոպական արվեստում: Ներքևի շարքի երկու միջին թվերը ցույց են տալիս նկարի ստեղծման ժամանակը (1514):

Եթե կարողանում եք կառուցել մի մոզական քառակուսի, ապա դժվար չէ կառուցել ցանկացած թվով այդպիսի քառակուսիներ: Դրա համար գտած մոզական քառակուսու ամեն մի թվին գումարելով նույն թիվը կամ ամեն մի թիվ բազմապատկելով նույն թվով, կստանանք նոր մոզական քառակուսի:

Բացի հաջորդական բնական թվերից, առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ մոզական քառակուսու վանդակներում տեղադրվում են պարզ թվեր, թվերի քառակուսիներ, խորանարդներ և այլն:

Կառուցենք 4×4 չափերով մոզական քառակուսի՝ փոքրագույն մոզական հաստատունով: Աղյուսակ 1-ից երևում է, որ մոզական հաստատունը հավասար է 34:



Նկ.2. Հատված Ալբրեխտ Դյուրերի «Մելանքոլիա» փորագրությունից


Չորս թվերի գումարը բոլոր՝ ուղղահայաց, հորիզոնական և անկյունագծային ուղղություններով հավասար է 34: Այդ գումարը հանդիպում է բոլոր անկյունային 2×2 քառակուսիներում, կենտրոնական քառակուսում $(10+11+6+7)$, անկյունային վանդակներից կազմված քառակուսում $(16+13+4+1)$, ինչպես նաև «ծիու քայլով» կառուցված քառակուսիներում $(2+8+9+15$ և $3+5+12+14)$ և հանդիպակաց միջին վանդակներով ստացված քառակուսիներում $(3+2+14+15$ և $5+9+8+12)$ (նկ.3):

16	3	2	13
5	10	11	8
9	6	7	12
4	15	14	1

Նկ.3

Մոզական քառակուսիների կառուցման կանոնները բաժանվում են երեք կատեգորիաների, կախված նրանից, թե ինչպիսին է քառակուսու կարգը. կենտ, հավասար է կենտ թվի կրկնապատիկին կամ հավասար է կենտ թվի քառապատիկին: Բոլոր քառակուսիների կառուցման ընդհանուր մեթոդը հայտնի չէ, չնայած օգտագործվում են տարբեր սխեմաներ: $n \times n$ կարգի մոզական քառակուսիների կառուցումը հաջողվում է միայն $n < 4$ արժեքների համար, այդ իսկ պատճառով մեծ հետաքրքրություն են ներկայացնում $n > 4$ դեպքում մոզական քառակուսիների կառուցման մասնավոր գործընթացները: Առավել պարզ է կենտ կարգի մոզական քառակուսիների կառուցումը:

Կանգ առնենք մոզական քառակուսիների կառուցման մի մեթոդի՝ տեռասների մեթոդի վրա: Տրված n կենտ թվի համար գծենք $n \times n$ չափանի քառակուսային աղյուսակ: Այդ աղյուսակի բոլոր չորս կողմերում կառուցենք տեռասներ (բուրգեր): Արդյունքում կստանանք աստիճանաձև սիմետրիկ պատկեր: Նկար 4-ում պատկերված է $n=5$ դեպքը: Սկսած աստիճանաձև պատկերի ծախս զագաթից, լրացնենք նրա անկյունագծային շարքերը 1-ից մինչև n^2 հաջորդական բնական թվերով: Դրանից հետո, որպեսզի ստանանք n չափանի դասական մատրից, տեռասներում տեղավորված թվերը տեղափոխում ենք $n \times n$ քառակուսու այն մասերը, որտեղ կհայտնվեն, եթե տեռասը ամբողջովին տեղափոխվի մինչև այն տեղը, որ տեռասի հիմքը համընկնի քառակուսու հակառակ կողմի հետ: Ինչպես երևում է նկար 4-ից, տեռասի վրա գտնվող յուրաքանչյուր թիվ տեղափոխվում է ծախսից աջ, աջից՝ ծախս, վերևից՝ ներքև, ներքևից՝ վերև, հինգ վանդակի չափով: Կամայական կենտ n -ի դեպքում այդ տեղափոխությունը հավասար է n -ի:



Նկ. 4

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՅՆ ԱՄԵՆՆ, ԻՆՉ ՈՒՆԵՄ



Ժամնա Յոկսեփյան: Ծնվել է 1948թ., ուսուցչների ընտանիքում: Մայրը՝ Լուսիկ Դանիելյանը, հայոց լեզվի ուսուցչուհի էր Ստեփանակերտի հ.2 միջնակարգ դպրոցում, հայրը՝ Աշոտ Յոկսեփյանը, պատմություն էր դասավանդում: Ավարտել է հ.2 դպրոցը, ապա Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1973-2008 թթ. աշխատել է հարսպատ դպրոցում, իսկ վերջին 18 տարիներին դասավանդում էր համաստեղել ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրենի պաշտոնի հետ: 2008-ից առայսօր ԼՂԴ 49և լեզվի տեսչության պետն է: Մեր գրույցը անդրադարձ է մանկավարժի անցած աշխատանքային ուղուն և ներկա գործունեությանը:

- Տիկին ժամնա, մասնագիտության հարցում մայրիկի՞ դերն էր մեծ: - Ես ավելի շատ ֆիզիկայի մասին էի երազում, թեպետ բոլոր առարկաներն էլ հավասարաչափ սիրում ու սովորում էի: Բայց երբ մեկնեցի Երևան, չգիտեմ ինչու, բանասիրական ընտրեցի: Երկի մայրիկիս և ուսուցչուհուս օրինակը շատ վարակիչ էր: Երկար տարիներ ինձ հայոց լեզու և գրականություն է դասավանդել Քնարիկ Սուլեյմանյանը, ով նաև մեր դասուցիկն է եղել: Այնքան լավ էր

կազմակերպված դասուցիկական աշխատանքը մեր դասարանում, որ բոլորս մոր պես սիրում էինք նրան: Ցավոք, արդեն երեք տարի է՝ նա չկա: Մենք միշտ այցելում էինք նրան, հավաքվում էինք ընկերներով և նորից կարծես մանկանում մեր սիրելի ուսուցչուհու բարի հայացքի ներքո: Իսկ նա պահում էր մի առանձին հուշալիք՝ մեր դասարանիցների լուսանկարներով, որտեղ յուրաքանչյուրս մեր ձեռագրով գրում էինք մեր կյանքում կատարված փոփոխությունների մասին: Ես ևս գրել էիք, թե ինչ ենք ուզում դառնալ, հետո՝ ով ինչ հաջողություններ ունեցավ, և այսպես՝ ամեն այցելության ժամանակ մի յուրօրինակ «հաշվետվության» պես շարունակվում էր ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը: Եվ եթե մեր դասարանի տղաներն ու աղջիկները ընտանիքում և կյանքում կարողացան գտնել իրենց արժանի տեղը, հասարակության համար պիտանի մարդ դարձան, ապա այդ ամենի համար պարտական ենք ընկեր Սուլեյմանյանին:

- Աշխատանքային անցած ուղու ո՞ր հատվածն էք կարևորում:

- Տարիներ ի վեր իմ աշխատանքային անփոփոխ հասցեն Ստեփանակերտի հ.2 դպրոցն էր, որն ավարտելուց հետո աշխատանքի եմ անցել որպես ջոկատավար: 1973-ին համալսարանն ավարտելուց հետո շարունակել եմ աշխատանքը նույն դպրոցում մինչև 2008-ը: Աշխատանքային ուղու յուրաքանչյուր հատված կարևորում եմ, քանի որ աստիճան առ աստիճան եղավ առաջընթացը: Իմ մանկավարժական ողջ գործունեությունը ես հիմա կարոտով եմ հիշում, բազմաթիվ լավ ու գեղեցիկ հուշեր են մնացել, իսկ ամենակարևորն այն է, որ ես երեխաներին եմ սիրել, նրանք էլ՝ ինձ:

- Իսկական մանկավարժը՝ ըստ ժամնա Յոկսեփյանի:

- Իմանալ՝ ինչ պետք է տալ աշակերտին, ինչպես մատչելի ձևով հարողել այդ գիտելիքը և մի քիչ էլ հոգեբան լինել, հասկանալ նրան նույնիսկ աչքերից, կարողանալ սեր ու հարգանք առաջացնել և՛ անձի, և՛ առարկայի: Իմ համոզմամբ: Ուսուցիչը պետք է սիրի երեխաներին, այլապես նա հաջողության չի հասնի:

- Ձեր կարծիքը՝ դասի հակիրճագրի մասին: Ձեր աշխատանքային երկար տարիների փորձը ի՞նչ է հուշում՝ ուսուցիչը պե՞տք է պատրաստվի յուրաքանչյուր դասի, թե՞ բավական է տարիների ընթացքում կուտակած փորձն ու գիտելիքների պաշարը:

- Պարտադիր պետք է պատրաստվի, նույնիսկ զուգահեռ դասարաններում դասավանդող ուսուցիչը չպետք է կրկնի ինքն իրեն: Թեպետ դասը ստեղծագործական գործընթաց է, և հնարավոր է՝ միտք ու հանգամանքները ստիպեն շեղվել նախանշվածից, միևնույն է, պետք է անպայման մախապատրաստվել դասին: Պետք է միշտ պատրաստ լինել աշակերտների հարցերին. ուսուցիչ գիտելիքները երբեք կասկածի տեղիք չպիտի տան: Մանավանդ համակարգչային մեր դարում, երբ սովորողները հաճախ ավելի շատ են օգտվում համացանցից, քան ուսուցիչները, չպետք է աշակերտի որևէ հարց ուսուցչին անհարմար վիճակի մեջ գցի:

- Փոխտնօրենի աշխատանքը ի՞նչ տվեց Ձեզ:

- Դա աշխատանքային այլ ռիթմ էր, երբ զուգահեռ նաև դասավանդում էի: Ի դեպ, ես այդ աշխատանքը ստանձնեցի բավականին բարդ մի ժամանակաշրջանում՝ 1991 թվականից, երբ համարյա պատերազմ էր: Բայց հպարտությամբ պիտի նշեմ, որ մենք ոչ մի օր մեր պարապմունքները չդադարեցրինք: Դպրոցում տեղակայված էր Բեկորի գունարտակը,

իսկ մենք միայն երրորդ հարկի 9 դասասենյակում էինք դաս անում, և երբ քաղաքը սկսում էին ռմբակոծել, աշակերտներին հանում էինք միջանցք: Չեստազայում երեխաները, վերիիշելով այդ դժնի ժամանակները, ինձ հարցնում էին. «Ընկեր Յոկսեփյան, հիշո՞ւմ եք՝ ինչպես էիք պառկեցնում մեզ և ձեր ձեռքերը տարածում մեզ վրա, որպեսզի մենք չվախենանք»: Նրանք թվում էր, թե իմ ձեռքերը կարող էին պաշտպանել արկերից ու ռումբերից:

- Լեզվի տեսչությունում Ձեր աշխատանքի յուրահատկությունների մասին ի՞նչ կասեիք:

- Ես միշտ ասել եմ, որ արցախցիները շատ օրինապաշտ են, և եթե լեզվի մասին օրենքի ինչ-ինչ խախտումներ են լինում, ավելի հաճախ չիմացությունից է, քան միտումնավոր: Մեր պահանջներին սովորաբար ըմբռնումով են մոտենում խանութների տերերը, ովքեր ցուցանակները գրելիս հաճախ տուրք են տալիս օտար լեզուներին: Չիմա անգլերենն է մոռայիկ դարձել, բայց բոլորը պետք է գիտակցեն, որ մայրենի լեզվի մաքրության հարցը օրախնդիր է և յուրաքանչյուրիս վերաբերում:

- Դուք հետևո՞ւմ եք զանգվածավային լրատվամիջոցների աշխատանքին, լեզվի մաքրության պահպանության առումով ինչպիսի՞ն է իրավիճակն այս ոլորտում:

- Այո, դա իմ պարտականությունների մեջ է մտնում: Ես կարող եմ գովեստի խոսքեր ասել Արցախի հանրային հեռուստառադիոընկերության հասցեին, բավականին առաջընթաց կա: Գիշտ է, բանավոր խոսքում հնարավոր է բարբառային արտահայտություններ լինեն, բայց մեր լրագրողները հիմնականում ձգտում են գերծ մնալ դրանցից: Մասնավոր ռադիոընկերությունների աշխատանքը չի գոհացնում այս առումով, խախտումները շատ են: Մենք նաև թերթ-

րի լեզվին ենք հետևում, և եթե լինում են թերություններ, սխալներն ի մի ենք բերում, ամփոփագիր կազմում և ուղարկում խմբագրություններին: Ոչ միայն «Ազատ Արցախ», «Ստեփանակերտ», այլև շրջանային թերթերը ձգտում ենք հնարավորինս ուշադրության առանցքում պահել, բայց այստեղ խոչընդոտող հանգամանքն այն է, որ մեր մախարարությունը չի ստանում այդ բոլոր թերթերը, և մենք ստիպված ենք լինում հայթայթել դրանք գնացող-եկողով:

- Ունե՞ք կյանքի նշանաբան, ապրելու բանաձև:

- Սիրվելու համար պիտի սիրել, իսկ ես սիրում եմ այն ամենն, ինչ ունեմ՝ իմ երկու զավակներին, հարսներին ու թոռներին: Ես ուզում եմ, որ նրանք՝ իմ հարազատները, և ոչ միայն նրանք, այլև բոլոր երիտասարդները իմանան, որ կյանքը շատ կարճ է: Երիտասարդ տարիքում դա չենք գիտակցում ու հետո իզուր կորցրած թույլների համար կարող ենք զղջալ: Պետք է ամեն մի պահը օգտագործել ժպտալու կյանքին, արևին, աշխարհին, բնությանը, ապրել՝ քանի դեռ կանք այս աշխարհում

- Տարին հրեյանական է Ձեզ համար. շնորհավորում ենք և մաղթում ամենայն բարիք: Եթե հնարավորություն լիներ ամեն ինչ նորից սկսելու, որևէ բան կփոխեի՞ք Ձեր կյանքում:

- Իհարկե, այո: Նույն ճանապարհը կանցնեի, բայց զուր կորցրած ժամանակ ունեմ այնտեղ՝ անցյալում, որ կարող էի ավելի ուրախ անցնել, պարզապես պահը կորցրի: Երբ երիտասարդ ես, կյանքն անվերջ է թվում, և դու չես շտապում ապրել, մինչդեռ պետք է շտապել ապրել ու ամեն մի պահը ապրել:

Հարցազրույց վարեց ՄԵԼՆԻՅԱ ՄԻՆՆՅԱՆԸ

Բաց դաս ԽՄԲԱԿԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԵ՝ ԽՈՒՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ապրիլի 6-ին մայրաքաղաքի հ.6 հիմնական դպրոցում տեղի ունեցավ խմբակային պարապմունք (բաց դաս)՝ խոհարարությունից, խմբակավար (տեխնոլոգիայի ուսուցչուհի)՝ Ելիզավետա Յարոսլավյանի ղեկավարությամբ: Ներկա էին բոլոր դպրոցներից ներկայացուցիչներ՝ խմբակավարներ, կազմակերպիչներ և հյուրեր: Թեման նվիրված էր Սուրբ Ջատկի տոնին, սակայն բոլորին հայտնի պատճառով (մեկ շաբաթով դպրոցը փակ էր) այն հետաձգվեց: Բավականին հետաքրքիր անցավ միջոցառումը: Խմբակի անդամներն արդեն քաջածանոթ էին մեր ազգային խոհանոցին: Մեծ սիրով պատրաստել էին համեղ կերակուրներ, տարբեր աղցաններ, թխել թխվածքներ, տարբեր տեսակի գաթաներ ու տորթեր: Այս պարապմունքին նախատեսել էին պատրաստել բրնձով ու չամիչով փլավ, ժենդյալով հաց և սպասքաղրել սեղան: Պարզվեց, որ մեր փոքրիկ խոհարարները նաև հմտորեն ու ճաշակով սեղան բացել ու ձևավորել գիտեն: Նրանց, այդ թվում՝ խմբակավարի, հագուկապը հիացրեց ներկաներին. բոլորը միատեսակ գոգնոցներ և գլխաշոր էին կրում: Քանի որ խմբակային պարապմունքի նպատակն էր պատ-

րաստել զատկական կերակուրներ, նրանք հայճուքով ներկայացրին Ջատկի տոնի խորհուրդը:

Չիտուս Քրիստոսի հրաշափառ հարությունը կոչվում է Ջատկի, որը նշանակում է զատում, բաժանում մեղքերից և վերադարձ առ Աստված: Ջատկի տոնին հավատացյալները ձու են ներկում ու նվիրում իրար: Ձուն համարվում է հարության և նոր կյանքի սկզբնավորման խորհրդանշան: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Քրիստոսի կենդանարար արյունը, որը թափվեց հանուն մարդկության փրկության: Այդ օրը մարդիկ պետք է իրար նվերներ տան, իսկ երեխաներին՝ գրքեր, մատիտներ, գանձան խաղալիքներ: Ջատկի շարժական տոն է և տոնվում է մարտի 22-ից ապրիլի 25-ը:

Ջատկի Քրիստոսի հարության տոնն է, ինչը մարդկության պատմության ամենակարևոր և շրջադարձային իրադարձությունն է: Ջատկի ծվերը հայ կանայք դնում են փոքր փախենդում ամեցրած ցորենի մեջ, որն անվանում են

ածիկ: Ածիկը համարվում է մեռնող ու համոռ կյանքի խորհրդանշան: Այսինքն՝ ցորենը ցանում ես՝ մեռնում է, հետո ծվում է, միջուկից դուրս է



գալիս կանաչը՝ խորհրդանշելով նոր կյանքի սկիզբը: Ածիկի շուրջը տեղադրված ձվերը երեխաները բաժանեցին ներկաներին և անցան փլավի պատրաստմանը:

Փլավն ունի խորհրդանշական իմաստ. բրինձը ժողովուրդն է, իսկ փլավի միջի չամիչը՝ մեր հավատքը և Աստուծո օգնականները: «Եկեք

ապրենք հավատքով», - հպարտությամբ ասաց խմբակի մասնակից աշակերտներից մեկը: Մինչև փլավը կեփի, անցան ժենդյալով հացի թխման գործողությանը: Բաժանվեցին խմբերի. մեկը խմորն էր հուսցնում, մյուսը հմտորեն կտրտում էր նախատեսված յոթ տեսակի բանջարեղենը... Այս ամենը զուգակցվեց գեղեցիկ խոսքով, արտասանություններով, հանելուկներով, համապատասխան երգ ու երաժշտությունով:

«Ժենդյալով հացը համարվում է արցախյան խոհանոցի թագուհին: Այդ հացը գրեթե հանդիսավոր կերակրատեսակ է, որի պատրաստման հիմնական իմաստը բարեկամներին միասին հավաքելն է ու բոլոր աշխատանքներին ակտիվ մասնակցելը», - նշեց Յայր Յակոբը և օրինեց աշակերտների պատրաստած գեղեցիկ սեղանը: Նա բարձր գնահատեց երեխաների և ուսուցչի աշխատանքը: Դասն ուսանելի էր, հաջողված էր պարապմունքը, շատ լավ ներկայացված էր ազգայինը, այն հասավ իր նպատակին:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԴԻՄԱՆԿԱՐ

«ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՏԵԼ ԵՄ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ...»

ՄԱՅՐ, ԴՈՒ ՀԱՄԱԿ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԷՑԻ

ՆՐԱ ԿԵՅՎԱԾՔՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ Է ԵՎ ՀԱՅ ԿԵՆՈՋՆ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ



Բնությունը կնոջն ասել է գեղեցիկ եղի՞ր՝ եթե կարող ես, իմաստուն եղի՞ր՝ եթե ուզում ես, բայց ողջամիտ լինել՝ դու պարտավոր ես:

Պիեռ Բոմարշե

Կյանքում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մարդկանց, որոնց հետ զրուցելն անզան մեծագույն հաճույք է պարզապես բեզ: Կարողանում ես կտրվել առօրյա հոգսերից և բավականությամբ ունենալ հաճելի զրուցակցիդ: Մտորում ես. ինչ կլինի, որ շրջապատում բոլորը լինեն ինչպես քո, սիրահարած և միմյանց հանդեպ դրսևորելի հոգատար և պատրաստակամ վերաբերմունք: Այդպես կյանքն ավելի գեղեցիկ կլինի, իսկ դժվարություններն էլ, թերևս, պակաս կվայելին:

Հիրավի, ապացուցելու կարիք չկա, որ հիմնավոր ժամանակներից ի վեր կյանքն առավել գեղեցիկ է դարձնում կին արարածը: Անսովորապես, հայ կանայք, որոնք մշտապես կարողացել են պահպանել հայ կնոջն արժանավայել կեցվածքը: Յուրաքանչյուր հայուհի մշտապես ցանկանում է լինել գեղեցիկ, նվիրված, խելացի, հպարտ: Կանայք հավատարիմ մնալով իրենց ներհատուկ հատկանիշներին՝ շարունակում են գերել, արարել և հասնել բազում բարձունքների: Կանանց միջազգային տոնական միասնակի կապակցությամբ իմ մեջ

ցանկություն առաջացավ հանդիպել և շնորհավորել մի մարդու, ով արժանի է մեծարման ու գնահատման: Մարդ, որը տարիներ ի վեր աչքի է ընկել իր նվիրվածությամբ ու պարտաճանաչությամբ:

Ասկերանի Գուրգեն Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանի գլխավոր գրադարանավար Մարիետա Բալասանյանին ճանաչում են շատերը: Գերադասեցի նրա հետ հանդիպել հենց գրադարանում, ուր շուրջ 37 տարի աշխատում է գրքերի մեջ ու ծառայում մանուկներին և երիտասարդ սերնդին: Երբ մտա գրադարան և հայտնեցի իմ այցելության նպատակը, բավական հուզմունք նկատվեց տիկին Մարիետայի աչքերում: Գուրգեն և հոգու խորքում ինձանից սպասում էր նման անակնկալի, չէ՞ որ դեռևս մանկուց գրքի սիրահար էի և գրադարանի մշտական հաճախորդ: Հիշում եմ, թե ինչպիսի մեծ սիրով էի գրադարան հաճախում, ուր տիկին Մարիետան դրսևորում էր ոչ միայն գրադարանավարի հատուկ կեցվածքը: Նրա մանկավարժական տակտը, մայրական գորովակից վերաբերմունքն իմ մեջ իմաստավորված է առայսօր, ու երևի թե այդ է պատճառը, որ հետագայում ընտրել եմ նաև գրադարանավարի մասնագիտությունը: Տարիներ անց աշխատելով Ասկերանի կենտրոնական գրադարանում՝ ավելի եմ համոզվել տիկին Մարիետայի մեծության մեջ: Նրա բարոյահոգեբանական ցայակցությունը (արդեն որպես գործընկերուհի) բազմիցս եմ զգացել ու հիացել նրա պահվածքով, թերևս, հետապետեցված լինելով տարիներին բոլորն էին զգում հոգատարության, փոխըմբռնման կարիք...

Մարիետա Բալասանյանը ծնվել է 1950 թվականի մարտի 6-ին, Ասկերանում: Սկզբնական կրթությունը ստացել է Ասկերանի ութամյա դպրոցում, այնուհետև շարունակել է 1967թ. ավարտել է Ասկերանի շրջանի ԽՍՆԱԿատի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է

երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը: 1975թ. համալսարանն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել է Ստեփանակերտի շրջանային կուլտուրայի բաժնում՝ որպես շրջանային բաժնի գրադարանավար: 1977թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի շրջանի ԳԿՀ-ի շրջանային մանկական գրադարանի վարիչ: Շուրջ 17 տարի աշխատել է մանուկների հետ՝ նրանց մեջ սեր սերմանելով դեպի գիրքն ու գիտելիքը և հասկացնելով նրանց, որ աշխարհում ամենագոր զենքը գիտելիքն է:

Աշխատանքին զուգընթաց համառոտությամբ ծավալել է մանկավարժական գործունեությունը: 1978-1983թթ. դասավանդել է Ասկերանի շրջանի հեռակա միջնակարգ դպրոցում:

1995թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի մշակույթի բաժնի կենտրոնական գրադարանի սպասարկման բաժնի վարիչի պաշտոնում: 2009թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի Գ. Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանի գլխավոր գրադարանավար:

Հաճելի ու անկաշկանդ զրույցի ժամանակ, որը հետաքրքրությամբ ունենդրում էին նաև գրադարանի մյուս աշխատողները, անմոռանալի հուշերի գիրկն ընկանք: Իրոք, կան մարդուն ի վերուստ տրված բյուր շնորհներ, բնավորության գծեր, որոնցով նրանք տարբերվում են իրարից: Թերևս, տիկին Մարիետային յուրահատուկ են կամքի ուժը, աշխատանքի հանդեպ պատասխանատվությունը, նվիրվածությունն ու աշխատասիրությունը:

Ընտանիք կազմելով Կասյանների հզոր գերդաստանի գավակ Արտյուն Կասյանի հետ՝ կարողացել են Ասկերանի շրջանում վայելել մեծ հարգանք և սեր: Նրանց ընտանիքում դաստիարակվել է երկու զավակ, որոնք մշտապես ծաղրվել էին զգում կրթության հանդեպ: Հար-

կավ, բոլորը կհամաձայնեն ինձ հետ, որ Կասյան եղբայրներն իրենց ապուլապարհին վայել հետնորդներ դարձան: Այսօր նրանք 33 և ԼՂԳՊ պատվավոր սպաներ են: Այո, ճիշտ և հայեցի դաստիարակությունը հնարավոր չէ, որ չտա իր արդյունքը, այն էլ այն ընտանիքում, ուր հայրենասիրությունն ու հավատարմությունը վեր են ամեն ինչից:

Արցախյան պատերազմից հետո Կասյանների ընտանիքը, հարմարվելով հետապետեցված դժվարություններին, լծվել էր հայրենի Ասկերանը շենացնելու գործին: Այս ընտանիքում, որտեղ տնօրինում էր ջերմությունը, հավատարմությունը, մեծ ակնկալիքներով էին տրամադրված: 21-՞ որ շուտով որդիներն առանձին ընտանիքներ պիտի կազմեին և Արցախի շեն օջախներն ավելացնեին: Ավա՞ղ, ճակատագիրը չկարողացավ այս ընտանիքի հանդեպ մնալ բարյացակամ: Պատերազմի անողոր թոհուրեհով անցած Արտյուն Կասյանը՝ 1998թ. անբուժելի հիվանդության զոհը դարձավ: Թվում էր, թե կյանքը կանգ կառներ Կասյանների օջախում: Ասկերանի ողջ հասարակությունը սգում էր մի անհատի կորուստ, ով հայրենասիրության և բնատուր խելքի մարմնացում էր, ով ասես մի բարձր սար լիներ իր հարազատների, ընկերների համար... Սակայն հայ կնոջ առաքինի կերպարը նորից ի հայտ եկավ և իմաստավորվեց տիկին Մարիետայի մեջ: Նա կարողացավ իր մեջ բավական ուժ գտնել և առաջ նայել՝ թերևս, ամուսնու հիշատակի առջև պարտավորություն զգալով: Այո, պարտավոր էր գավակներին առաջնորդել լուսավոր և արժանի ճանապարհով:

Սահեցին տարիները... Տարիներ՝ շաղախված հաջողություններով և դժվարություններով: Տիկին Մարիետայի որդիներն ընտանիքներ կազմեցին, օջախին արժանի հարսները ընտանիքի մոր համար դուստրեր դարձան: Նրանք գնահատեցին հայուհուն վայել բոլոր ար-

ժանիքներով օժտված կնոջը:

Հիրավի, երբ աստված արարել է կին արարածին, նրան բազում ծիրքեր տալու հետ մեկտեղ, չի զլացել անասան ուժ, հզոր կամք և համբերություն շռայլելու: Ահավասիկ, իմ հերոսուհին, որն այսօր կարող է միանգամայն ասել. «ես հասել եմ իմ նպատակներին, կրթել և դաստիարակել եմ իմ երկրին արժանի գավակներ և շարունակում եմ նույն ոգով դաստիարակել թոռներին»:

Այսօր ես այնքան երախտապարտ եմ և գոհ, որ գնահատված եմ հասարակության կողմից, որ արժևորված է գրադարանավարի աշխատանքը: Միշտ էլ հաճույքով եմ աշխատել մանուկների հետ և ամեն կերպ ցանկացել նրանց մոտ ավելի անարագորդել սերը դեպի գիրքը, կրթությունը: Մեր երկրի ապագան այսօրվա մատաղ սերունդն է, որի հանդեպ պետք է դրսևորեն ամենաուշադիր և ամենանրբանկատ վերաբերմունք: Այնպես անենք, որ նրանք հասկանան, որ իրենք են այսուհետ տերն Արցախ աշխարհի:

- Այս գեղեցիկ տոնի առթիվ ցանկանում եմ շնորհավորել բոլոր կանանց և մարդեք, որ միշտ լինեն հմայիչ, ողջամիտ և երբեք չկորցնեն իրենց կանացիությունը: - ասաց Մարիետա Բալասանյանը:

Հիրավի, մեծ տպավորություն ստացա իմ հանդիպումից: Անցյալի և ներկայի հուշերն իրար միահյուսված՝ թևածուլ էին գրադարանի ջերմ մթնոլորտում: Այնքան մեծ ոգևորություն և խանդավառաց էր նկատվում ամենքի դեմքին: Աշխատողները նույնպես հիացած լսում էին ավագ գործընկերոջը՝ միանշանակ դասեր քաղելով նրա խորհուրդներից ու բազում պատմություններից:

Շնորհավոր տոնը, սիրելի Մարիետա: Քեզ ամուր առողջություն, և թող հայ կնոջն արժանավայել և օրինակելի թո կեցվածքը միշտ անսասան լինի:

ԿՈԿԻԿ ԵՎ ՔՆԵՈՒՇ, ՆՐԱՆԱԿԱՏ ԵՎ ՍԻՐԱԼԻՐ

Կին... Այս մի հատիկ բառի մեջ այնքան խորունկ իմաստներ են ներառված, այնքան հույզեր ու անեղծվածներ, այնքան գողտրիկ մտքեր ու ցանկություններ: Յուրաքանչյուր կնոջ մեջ կարելի է տեսնել առանձնահատուկ քնքշանք, նրբություն, գեղեցկություն, իսկ կանացի սեքսեթանքը կնոջ անբաժանելի ու հավատարիմ ընկերն է եղել մշտապես: Սակայն ամենամեղմ ու ամենականացի կնոջ մեջ արքայավայել նստած է կամքի հզոր ուժ, քաջություն ու ակնբախ հայրենասիրություն:

Դեռևս վաղընթացիկ տարիներից հայ կինը կարողացել է ապացուցել, որ իր ազգի արժանի դուստրն է, որ կարողացել է զօր ու գիշեր մաքառել տղամարդկանց կողքին՝ երբեք չզիջելով առաջին գիծը: Այսօր էլ մեր շրջապատում տեսնում ենք այնպիսի կանանց, որոնց հանդեպ անսահման սեր և հարգանք ենք տածում, արժևորում նրանց ավանդը: Խոնարհվելով արցունք ու ցավ տարած բոլոր հայ կանանց առջև՝ նրանց տալիս ենք մեծարանքի ու ակնածանքի մեր խոսքը: Հիրավի, բոլոր հայ կանայք արժանի են ուշադրության և վաստակել են երջանիկ լինելու իրավունքը:

Գեղեցիկի, սիրված լինելու, հրաշքի սպասման, հաճելի խոսքեր լսելու, հավերժականի մասին մտածելու խորհուրդ ունի կանանց նվիրված միամտակը, որը նաև զարթոնքի ազդարարում է: Աստուծո՛ր, թե կինն ու գարունը չեն տարբերվում միմյանցից: Գարունը հենց կինն է՝ միշտ ծաղկող, փթթուն, կինն էլ իր եղբայրն է գարունն է իր կա. հանելուկներով ու անակնկալներով լի:

Հիշում եմ, երբ դպրոցահասակ էինք, մեզ համար գեղեցկության և կանացիության մարմնացումը մեր ուսուցչուհիներն էին: Նրանք մաքրության, գեղեցկության և նրբակերտության խորհրդանիշ էին սովորողներին համար, մենք ոչ միայն հիանում էինք նրանցով և ցանկանում՝ ընդօրինակել, այլև անթա-

քույց սիրում էինք նրանց:

Ամալյա Շիրոյան: Ասկերանի Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի հարգված ուսուցչուհի: Կոկիկ և քնքուշ, նրբանկատ և սիրալիր. ահա այսպիսին են հիշում ընկեր Շիրոյանին: Նրա հետ ունեցա հաճելի առանձնագրույց, որը նաև հոգեբանության յուրօրինակ դաս լինեց ասես.

- Ընկեր Շիրոյան, նախ շնորհավորելով Ձեզ՝ կանանց միամտակի կապակցությամբ, կցանկանայի լսել Ձեր կարծիքն այս տոնի վերաբերյալ:

- Նախ բնությունն ինքն է շնորհավորում գեղեցիկ այս տոնը՝ զարթոնքի ու արարման իր հրաշալի ծեսով, որն ասես փոխանցվում է բոլորին, խառնվում նրանց ժայտներին, ծառագույն աչքերի մեջ: Բազմաթիվ տարիներ աշխատելով երեխաների հետ՝ չեմ կարող ցանկանում տոն չկապել նրանց հետ: Ինձ համար իմ երեխաները մնան են ծյունաբաթախ, ծյունաբաթու, ծյունահոտ ծաղիկ:

Կինը սեր է, ջերմություն, գեղեցկություն: Կյանքի իր ճանապարհը կինն անցնում է սիրելով: Չմայած այդ ճանապարհը նրան բերում է և՛ անպակաս գիծ երջանկություն, և՛ հորիզոններ հաղթահարելու ամենագորություն, և՛ տառապանք, ճիչ, ընդդուրն աշխարհի, մարդու, ինքն իր դեմ: Տառապանքի ու երջանկության մշտնջենական այդ հակամարտությունում հաղթում է կինը: Բյուրեղանում է, բարձրանում՝ ձգտելով լինել, կայանալ:

- Արցախցին անցել է դժվար և դաժան ճանապարհ: Ի՞նչը մեզ հայ պահեց, և ինչի՞ հասանք:

- Այն դժնդակ օրերին, երբ մարդիկ միաբռնուցք ոտքի էին կանգնել, երբ չկար իմ ու թո՛ւ ի գաղտնիքը, ամեն ինչից վեր կանգնած էր մարդկային մի համերաշխություն, մտքերի ու հույզերի զարմանալի մի ընդհանրություն:

Ճակատագիրը դաժանորեն գետնով տվեց

ին ժողովրդին. երկրաշարժ, պատերազմ: Այնուամենայնիվ, հայը կանգնեց ճակատագրին դեմ հանդիման՝ հաղթելու հաստատակամությամբ:

Կործանվում է նա, ով կորցնում է երազի ճամփան: Մեր մասին ասում են, որ մենք երազող ժողովուրդ ենք: Փառք ասած, որ դա համապատասխանում է իրականությանը: Այսօր, մենք պարտավոր ենք մտածել մեր երկրի ապագայի, այն շենացնելու մասին: Իսկ մեզ՝ ուսուցիչներին, վերապահված է ամենակարևորը. ճիշտ դաստիարակել մատաղ սերնդին, երեխային անկաշկանդ ու ինքնաբերական խոսել և գրել սովորեցնել, նրա մեջ բարձրացնել սերը գիտելիքի հանդեպ: Մենք պետք է կարողանանք երեխաների մեջ սեր սերմանենք աշխարհի ու մարդու նկատմամբ:

- Ձեր ակնհայտ նրբանկատությունը, կյանքի փորձն ու հոգատարությունը դիմացինի հանդեպ հայտնի է շատերին, միաժամանակ Ձեզ հաստակ են ճշմարտախոսությունն ու տեղին քննադատությունը: Ի՞նչ կասեիք սկսնակ ուսուցիչների մասին:

- Ինքնին հասկանալի է, որ ապագան երիտասարդներինն է և, իմ կարծիքով, այսօր այն ապահով ձեռքերում է: Մեծագույն բերկրանք են զգում, երբ տեսնում են, թե ինչպիսի ոգևորությամբ են սկսնակ ուսուցիչները մղվում աշխատանքին: Նրանք անընդհատ խորհրդակցում են փորձառու ուսուցիչների հետ՝ լսում նրանց խորհուրդները և հաշվի առնում: Նրանցից յուրաքանչյուրը ցանկության, հաստատակամության, ստեղծագործական ակյուն ունենալու դեպքում կարող է դառնալ ինքնուրույն, անկրկնելի մասնագետ և անձնավորություն:

- Դուք հայոց լեզվի և գրականության հիանալի մասնագետ եք, ի՞նչը մեզ Ձեզ նախընտրելի հենց այդ առարկան:

- Գրականությունը և գիտությունն է, և՛ ար-



վեստ: Այդ առանձնահատուկությամբ է պայմանավորված գրականության ուսուցչի մասնագիտությունը: Գրականությունը մարդու հատկություն է, իսկ գրականության ուսուցիչը մտքի ու սրտի մարդ է, քանզի նա հստակ պետք է պատկերացնի մարդուն: Գրական ստեղծագործության օրինակները զուգորդվում են իրական կյանքի հետ՝ գրականության դասերը դարձնելով կյանքի դասեր:

- Ձեր բարեմադրանքը կանանց: - Այս հիասքանչ տոնի առթիվ ցանկանում եմ բոլոր կանանց խաղաղություն: Թող այլևս ոչ մի մայր չարտասալի, ու անձնական երջանկությունն ուղեկցի բոլորին: Կանայք լինեն մշտապես գնահատված, սիրելի ու քնքուշ: Հիրավի, կինն արժանի է ամենամեծ ուշադրության ու արժևորման:

Արդարև, արժանապատվությունը ձեռքբերվելի չի լինում: Այն մարդուն տրվում է ի վերուստ, և փառք ու պատիվ այն մարդուն, ով ամբողջ կյանքում ապրում է հավատարիմ իր եղբայրն՝ բարձր պահելով արժանապատվությունը:

Կարինե ԲԱՆԾԻՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մայրենի լեզվի ուսուցման հարցը եղել և մնում է մանկավարժության հիմնական խնդիրներից մեկը, որովհետև մայրենի լեզվի ուսուցումը երկարաժամկետում ունի այն թե՛ որպես գիտելիքների ձեռքբերման միջոց, մեծապես նպաստում է երեխայի հոգևոր ուժերի զարգացմանը, նրա՝ որպես հասարակության անդամի, մարդ-քաղաքացու ձևավորմանը:

Մայրենի լեզվով երեխան ամեն ինչ հեշտ ու արագ է ստանում ու յուրացնում, ուստի և, ավելի լավ, ավելի բազմակողմանի ու խոր զարգացում ու առաջընթաց է ապրում:

Մայրենի լեզվի ուսուցման բնագավառում առաջին քայլերը երեխան անում է ընտանիքում՝ ծնողների ու մեծերի շրջապատում, նրանց հսկողությամբ ու աջակցությամբ: Այս առումով լեզվի ուսուցման համար երեխայի կրտսեր տարիքն անփոխարինելի մի ժամանակաշրջան է. այդ տարիքում երեխան երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ է սովորում, տարերայնորեն սեփականում մայրենի լեզվի այն բնական ատաղձն ու յուրահատկությունները, որոնք հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում ավելի բարձր տարիքում: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել և ժամանակին ու ճիշտ օգտագործել երեխայի տարիքային առանձնահատկությունների ընձեռած ուսուցողական մեծ հնարավորությունները՝ նրա մեջ լեզվագաղտություն մշակելու, մտածողություն ու խոսքի զարգացումը ճիշտ էրևցնել մեջ դնելու համար: Երեխաների խոսքի ու մտածողության զարգացման համար բացառիկ նշանակություն ունի ընտանիքը, որովհետև մայրենի լեզուն նա սկզբնապես սովորում է ընտանիքում, իսկ լեզվի հետ ձևավորվում է նաև նրա մտածողությունը: Ընտանիքում սովորածն է, որ հետագայում հինք է դառնում կազմակերպված ուսուցման համար, մշակվում ու կատարելագործվում է դպրոցում: Առանց ընտանիքի տված լեզվական հիմքի դպրոցի գործը շատ կոճվարանա, այդ պատճառով էլ ընտանիքում երեխայի խոսքի զարգացման վրա լուրջ ուշադրություն պետք է դարձնել:

Ինչպես Միքայել Նալբանդյանն է նկատել՝ հայրենի հարկի տակ հնչող մայրենի խոսքը բացառիկ կարևոր դեր կարող է խաղալ երեխայի լեզվի ու մտածողության մշակման ու զարգացման գործում: Դեռևս այստեղ՝ հայրենի հարկի տակ, մայրական կաթի ու գուրգուրանքի հետ է, որ երեխայի մեջ ձևավորվում է սկզբնական լեզվագաղտությունը: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Նալբանդյանը վճռականորեն բողոքում էր հայ ընտանիքներում օտար լեզվով խոսելու արատավոր սովորության դեմ, որովհետև այդպիսի ծնողները խախտում են երեխայի հոգեկան զարգացման բնական ընթացքը, աղճատում նրա լեզուն ու մտածողությունը և ազգին տալիս «կեղևով միայն հայ զավակներ»:

Երեխայի խոսքի ու մտածողության մշակումն ու զարգացումն ամեն մի ընտանիքի ու ծնողի գլխավոր հոգսը պետք է լինի՝ սկսած

նրա առաջին թրթվանքից մինչև ինքնուրույն կապակցված խոսքի ստեղծումը, բառը ճիշտ արտասանելուց ու տեղին գործածելուց մինչև խոսքի գեղեցկացումը: Դեռևս արդեն յուրաքանչյուր ծնողի համար հույժ անհրաժեշտություն է լավ իմանալ այն բոլոր միջոցներն ու ձևերը, մեթոդական գոնե այն պարզ եղանակներն ու հնարները, որոնք հարկավոր են երեխայի խոսքի մշակման ու զարգացման համար: Այդ միջոցներից ամենահիմնականը ընտանիքում հնչող խոսքն է, ծնողների ու ընտանիքի մյուս չափահաս անդամների խոսքի մաքրությունը, ճշտությունն ու գեղեցկությունը: Ինչպես ընտանիքում են խոսում, այնպես էլ այդ ընտանիքի երեխաներն են խոսում՝ սովորելով մեծերից, ընդօրինակելով նրանց խոսքն ու խոսելու եղանակը:

Ամեն օր լսելով իրեն շրջապատող մարդկանց կանոնավոր ու գեղեցիկ գրական խոսքը՝ երեխան մեծապես ազդվում է դրանից, ընդօրինակում և սեփականում է այն: Երեխայի հետ խոսելիս թե՛ նրան դիտորդություն անելիս, որևէ հետ զրուցելիս թե՛ նրա համար որևէ բան պատմելիս ծնողը միշտ պետք է հատուկ ուշադրություն դարձնի իր խոսքին՝ հետևի բառերի ծանր ու հասկանալի լինելուն, մտքերի պարզությանն ու մատչելիությանը, լեզվի կանոնավորությանն ու գեղեցկությանը: Պետք է ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամ այս հարցում իրեն պատկերացնի որպես ուսուցիչ, սովորեցնող, խոսքի կենդանի օրինակ տվող և, ըստ այդմ, մաքրի, կանոնավորի ու գեղեցկացնի իր խոսքը: Միայն են այն ծնողները, ովքեր երեխայի հետ աղավաղված, ինչպես ստում են՝ «ծոխ լեզվով» են խոսում: Երեխան միշտ պետք է լսի մաքուր, ճիշտ ու հստակ խոսք, որովհետև այն ընդօրինակվելու է:

Երեխայի խոսքի մշակման ու զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև նրա խոսքի անընդհատ հղկումն ու կատարելագործումը: Դրա համար պետք է երեխային խոսեցնելու, պատմելու ու արտահայտվելու հնարավորություն տալ, որպեսզի նա վարժվի խոսելու մեջ և երկրորդ՝ հնարավոր դառնա նրա լեզվակազմ-արտասանական թերություններն ի հայտ բերել և դրանց վերացման ու ճշտման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանք տանել: Դաճախակի կրկնվող ակտիվ երկկողմյան զրույցի դեպքում երեխան ոչ միայն հարցեր է տալիս, այլև հաճույքով ու պատրաստակամությամբ պատասխանում է տրված հարցերին, ընդարձակ ձևով պատմում է իր տեսածի, լսածի ու զգացածի մասին: Ծնողները պետք է անպայման ժամանակ հատկացնեն երեխաներին՝ նրանց «բլբլոցը» լսելու, թույլ տված սխալներն ուղղելու, այդ ընթացքում նոր բառեր ու արտահայտություններ սովորեցնելու համար: Այսպիսի փոքրիկ «գոհողությունները» երբեք զուր չեն անցնում և անփոխարինելի մշակակություն են ունենում երեխաների համար ոչ միայն նրանց լեզվի ու մտածողության զարգացման, այլև դաստիարակության համար՝ հատկապես երեխաների ու ծնողների միջև ամուր կապ ստեղծելու առումով:

Փոքրիկների պատկերացումներն ու բառապաշարը հարստաց-

նելու, նրանց մեջ կապակցված խոսք կառուցելու կարողություն մշակելու, ինչպես նաև ընդհանրապես խոսել ու արտահայտվել սովորեցնելու տեսակետից խիստ օգտակար պետք է համարել նաև թեմատիկ նկարների, դիաֆիլմերի, մուլտիպլիկացիոն ու մանկական կինոնկարների, տեսագրությունների և այլ ցուցադրական նյութերի դիտումները: Այդպիսի ցուցադրումների ժամանակ ևս ծնողները պետք է վերահսկողի, առաջնորդի ու կողմնորոշողի դերում լինեն:

Շատ արժեքավոր ու օգտակար պետք է համարել տիկնիկային ու թատերական ներկայացումների դիտումները, որոնք ոչ միայն որոշակի բովանդակություն, այլև պատրաստի լեզվական ձևեր են տալիս երեխաներին, սովորեցնում են գեղեցիկ խոսք կառուցել, տիրապետել խոսքարվեստին: Այս դեպքում երեխան շփվում է կենդանի խոսքին, մտովի հաղորդակցվում է դերակատարների հետ, ընդօրինակում նրանց գեղեցիկ արտահայտություններն ու խոսքի հնչեղանքը, բառերն ու արտասանության եղանակը:

Երեխաների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է հեթիաթներ ու պատմություններ պատմելը: Դեթիաթների ու փոքրիկ պատմությունների ունկնդրումը նրանց համար հաճելի զբաղմունք է և սակայնակ ուսուցողական արժեք ունի ոչ միայն խոսքի զարգացման, այլև աշխարհաճանաչողական տարաբնույթ գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման առումով: Ծնողները պարտավոր են ազատ ժամերին երեխաների համար գեղեցիկ հեթիաթներ ու կարճ մանկական պատմվածքներ, հետաքրքրաշարժ նյութեր կարդալ կամ պատմել և ապա հետևել, որ նրանք վերարտադրեն ստացած տպավորությունները, դրանց կապակցված խոսքի տեսք տան: Այս աշխատանքը մեծապես կնպաստի նաև երեխաների գեղագիտական ճաշակի մշակմանը՝ նրանց գեղեցիկ օրինակ տալով, հաղորդակից դարձնելով խոսքարվեստին:

Երեխաների խոսքի զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի մշակմանը նպաստում են բանաստեղծությունների անգիր անելն ու երգերի ուսուցումը: Ուսանավորները երեխաներին սովորեցնում են զգալ խոսքի ռիթմն ու երաժշտությունը, գեղեցկությունն ու բարեհնչունությունը, դրանք երեխաներին տալիս են կապակցված բառեր, արտահայտություններ ու գեղեցիկ պատկերներ:

Խոսքի ու մտածողության զարգացման տեսակետից երեխաներին շատ բան կարող են տալ այցելությունները՝ թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ: Այս միջոցառումները երեխաների համար հսկայական ու անփոխարինելի մշակակություն կունենան նրանց մտավոր պաշարի հարստացման, գեղագիտական ճաշակի ու խոսքի մշակման համար:

Խոսքի զարգացման տեսակետից բացառիկ արժեք ունեն բնության գրկում անցկացվող զբոսանքներն ու դեպի բնություն կազմակերպվող նպատակային էքսկուրսիաները:

Բնության գրկում եղած ժամանակ երեխաների մեջ տասնյակ

հարցեր են ծնվում շրջապատի առարկաների, երևույթների, գույների ու ձայների վերաբերյալ, դրանց ամենայն համբերատարությամբ, մտածված ու մատչելի ձևով պետք է պատասխանել:

Երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում հատուկ ուշադրություն պետք է դարձնել բառերի ու արտահայտությունների ճիշտ ու տեղին օգտագործմանը, որովհետև առանց գործուն միջամտության, ինքնահոսի թողնելով, դրանք շատ ուշ կարող են վերածվել կարողության, այնինչ անհրաժեշտ է, որ լեզվական կարողությունները երեխայի մեջ ձևավորվեն հնարավորին չափ արագ ու հեշտ, որպեսզի սովորած ամեն մի նոր բառ ու արտահայտություն անմիջապես մտնի երեխայի գործուն բառապաշարը, դառնա հաղորդակցման միջոց: Եթե երեխային շրջապատող մարդկանց խոսքին առաջադրվող պահանջներում հիմնականը նրա պարզ, մատչելի, գեղեցիկ, հակիրճ ու դիպուկ լինելն է, ապա այս աստիճանում երեխայի խոսքին առաջադրվող ամենահիմնական պահանջը նրա ճշտությունն է: Խոսքի ճշտությունը նրա զարգացման ու առաջընթացի, նրա լեզվական հիմնական գործառնության ճիշտ ու անթերի դրսևորման առաջին պայմանն է: Եթե խոսքը ճիշտ չէ, ուրեմն, այն չի կարող ճիշտ արտահայտել մարդու մտքերն ու զգացմունքները և հետևաբար՝ դիմացինին հաղորդել, փոխանցել դրանք: Այս առումով երեխայի ասած ոչ մի բառ ու նախադասություն անուշադրության չպետք է մատնել: Եթե այն լեզվական կամ արտասանական տեսակետից ճիշտ չէ, ուրեմն՝ հաղորդակցման իր գործառնությամբ լիարժեք կատարել չի կարող: Սկզբում կարելի է բավարարվել միայն սխալ ասածը ճշտելով ու այդ ճիշտը երեխային կրկնել տալով: Սակայն երեխայի խոսքի ու մտածողության զարգացմանը զուգընթաց պետք է անցնել նաև լեզվական սխալների ուղղման ավելի գործուն ու արդյունավետ ձևերի գործադրմանը:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում շատ օգտակար կարող է լինել երեխայի խոսքի գեղեցկացման ուղղությամբ տարվող աշխատանքը: Այն կարելի է սկսել երեխային շրջապատող ծանոթ առարկաների ու երևույթների հատկությունները նկատել տալուց, այդ առարկաներին ու երևույթներին համապատասխան հատկանիշներ վերագրելուց՝ վարդ կարմիր է, սպիտակ է, դեղին է, հոտավետ է, բացված է, գեղեցիկ է, փշոտ է, կոկոն է... և կամ՝ դեղին վարդ, սպիտակ վարդ, հոտավետ վարդ...

Ամենօրյա ուշադրությունն ու հսկողությունը երեխայի խոսքի նկատմամբ անպայման իր արդյունքը կտա, և նա, իր առաջին թրթվանքներից սկսած, կսովորի ճիշտ ու գեղեցիկ խոսել, զգալ իր մայրենի լեզվի գեղեցկությունն ու հարստությունը, ապրել դրանով, իր համար այն գեղեցիկ դարձնել կյանքի պայքարում:

**Պայանե ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
ՀՀ ԿԸՆ ԿԱԻ ԼԴՀ
մասնաճյուղի գրականության
մասնագետ**

**ՈՎ ԳԻ ԻՄԱՆՈՒՄ ՈՒ
ԳԵՆԱԶՏՈՒՄ ԻՐ
ԱՆՅՅԱԼԸ, ԳԻ ՈՒՆԵՆԱ
ՀՈՒՍԱԽ ԸՂԱԳԱ**

Տփղայի... Նվիրական ու քրթաբույր անուն ամբողջ հայության համար, անուն, որ խորհրդանշան է հայ ընթացողի:

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները դատել է Գասպարյանի և պատմության ուսուցիչներ Լ. Մարտիրոսյանի, Գ. Պողոսյանի ղեկավարությամբ զարմանալի արձակուրդի առաջին օրը կազմակերպեցին էքսկուրսիա Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղում գտնվող անվանի հայդուկապետ Նիկոլ Դումանի տուն-թանգարան: Երեխաների տպավորություններն անչափ վառ ու գունեղ էին: Նրանք շատ տեղեկություններ իմացան ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայտնի ֆիդայի, մեր համերկացի Նիկոլայու Տեր-Յովհաննիսյանի կյանքի, գործունեության, անցած փառավոր մարտական ուղու մասին: Երեխաները տեսան և նույնիսկ շոշափեցին նրա ձեռք-գլխամթերքը, հազուստը, քարտեզները, որոնցով նա առաջնորդվել է մարտի դաշտում, ճանաչեցին մեծ հայդուկապետին, տեսան այն տունը, որտեղ ծնվել, մեծացել և դաստիարակվել է ազգային մեծ գործիչը: Նրանց վրա մեծ տպավորություն թողեց տան կահավորումը՝ ազգային ավանդական կահ-կարասին, կարպետները, այգուս կախված խնոցին, նկուղան տեղադրված ճախարակը, բուրդ գգելու սանրը (սանդեքը), կրակ թեժացնելու փուքսը, տրեխները, տանը կից թոնրատունը, մառանը և տարբեր աշխատանքային ու կենցաղային իրեր, որոնց մասին նրանք գիտեին միայն գրքերից: Թանգարանի յուրաքանչյուր անկյունից զգացվում էր հայկական ավանդական շուքն ու ոգին: Այնուհետև տուն-թանգարանի բակում կազմակերպեցին բաց դաս՝ նվիրված Նիկոլ Դումանին: Դասը Միեր Գասպարյանը սկսեց ֆիդայական երդման խոսքով:

- Երդվում են իմ պատմի ու ազգության վրա, իմ բոլոր ուժով, եթե հարկ լինի՝ նաև իմ արյունով ծառայել Հայաստանի ազատագրության դատին՝ ընդդեմ սուլթանի բռնակալության: Այստեղ իմ բարձր Հայաստանի լեռները կլինեն և իմ ամենամեծ բաղձանքը՝ հայրենիքի համար մեռնելը: Բարով արժանանա հրեղեն գնդակի համբույրին:

Ստեփանակերտ, մեկը մյուսին շարունակելով, ներկայացրին Նիկոլ Դումանին՝ ինքնակենսագրական տվյալներից մինչև թուրք զավթիչների դեմ մղած եռանդուն պայքարը (1894-1896) Արևմտյան Հայաստանում (Վան, Կարին, Տրապիզոն): Մանրամասն նշեցին, թե ինչպես է նա կազմակերպել 1897թ. հունիսի 25-ի համատրի արշավանքը և վրեժ լուծել քրդական մագրիկ ցեղերից: Ներկայացրին 1905-1906թթ. հայ-թաթարական (աղբերջանակալ) ընդհանրությունների ժամանակաշրջանի ամբողջ կողորհող և նրա ակտիվ մասնակցությունը 1910թ. Կոպենհագենի 2-րդ կոնգրեսին: Երեխաները հուզմունքով ու ափսոսանքով նշեցին, որ Դումանը ինքնասպան է եղել 1914թ., Բաքվի Լարինովի անվան հիվանդանոցում: Երեխաների այն հարցին՝ «Ինչու՞ ինքնասպան եղավ Դումանը», մենք պատասխանեցինք. «Դումանը հեղափոխական էր ամբողջ էությամբ, նա չէր հասկանում կյանքն առանց հեղափոխական գործունեության և միշտ կրկնում էր, թե մարդ 50 տարեկանից անց արդեն անպետքական

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

ՈՐ ՄԻԱՆԱՆԵ՛ ԿՈՒԾԵՂԱՆԱՆԵ

Վերջերս Քաջաթաղի շրջանի Սարատակի միջնակարգ դպրոցի (տնօրեն՝ Գևորգ Դավթյան) աշակերտները և ուսուցիչները բարեկամական այցով եղան Ստեփանակերտի 3ովհաննես Թումանյանի անվան հ. 9 միջնակարգ դպրոցում (նախաձեռնությամբ կրթության բաժնի տարրական դասարանների գծով տեսուչ Ս. Թամազյանի):

Տառապանքի իր ազգին բաժին ընկած բարբարոսական սպանդի համար հայրենասեր-մայրը չի մոռանում նաև կյանքի գեղեցկությունների մասին, ստեղծում է հուշ-թանգարանը՝ երգելու նաև ի փառք կյանքի, սիրո, մարդկայնության. նա ամենևին չի կորցնում հույսն ու հավատը:

Այցը հետաքրքիր էր ու բովանդակալից: Այն սուկ երկու դպրոցների միջև ծանոթության և լավագույն նախաձեռնությունների նպատակ չէր հետապնդում, այլ՝ սրտանց խոսելու, իրար ավելին պատմելու, ոգեկոչելու, ներկայացնելու:



Օրվա խորհուրդը վեհ էր ու վսեմաշուք: Դպրոցի փառքի սրահում արիության դաս էր, հավաքվել էին հյուրեր, ուսուցիչներ, աշակերտներ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արցախյան ազգային-ազատագրական պայքարի զոհերի հիշատակին: Աշակերտները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ կարող են հաղթել ոչ միայն զենքով, այլև՝ իրենց հոգեթով երգով, գրչով և իրական, փառապանծ հզոր բանակով:

Շարժման մասնակիցներից է և տառապանքի փորձ ունի, նշեց, թե ինչպես է փորձել պաշտպանել իր ազգի իրավունքը, անմնացորդ նվիրվել ազգային հարցին, և այն տղաները, ովքեր անմահությամբ հաղթեցին մահին, նրանց և՛ փառք, և՛ օրինակ...

Փառքի սրահում սուրբ նահատակների լռին ու խոսուն նկարների առջև դպրոցի սաները խոնարհվում և երգվում են հայրենասեր զինվոր դառնալ և սրբությամբ ծառայել հայրենիքին, պահել-պահպանել այն հողը, որի համար կյանքեր են նվիրաբերվել:

Դպրոցի տնօրեն Արթուր Անտոնյանը ողջունեց միջոցառման մասնակիցներին, ջերմ ընդունելության արժանացրեց նրանց և ասաց, որ ինչքան էլ պայծառ լինի ներկան ու ավելի վառ՝ ապագան, այնուամենայնիվ, չպետք է մոռանանք նրանց, ում ջանքերով ստեղծվել է նոր կյանք: Եվ արյան գնով ձեռք բերած այսօրվա լուսաշող օրը Սարատակի միջնակարգ դպրոցի աշակերտները եկել են իրենց բարեկամական ձեռքը մեկնելու մեզ, եղբայրանալու, ընկերանալու և ջերմացնելու մեր սրտերը: Այնուհետև դպրոցի դահլիճում ելույթ ունեցան մեր դպրոցի կրտսեր և միջին դասարանների սաները: Աշակերտները ողջունելի խոսք հղեցին հյուրընկալ դպրոցի իրենց հասակակիցներին, բացատրեցին «ընկեր» բառի իմաստը և միմյանց հետ բարեկամանալու մասին ցանկություններ մտաբեցին՝

Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանն իր խոսքում նշեց, որ շատ ցավ ու արհավիրք է տեսել հայ ժողովուրդը, բայց ամրակուռ է նրա ոգին: Եվ այսօրվա համատեղ միջոցառումն էլ հենց այդ նպատակին է ծառայում, որ բարեկամության հիմնաքարն արդեն դրված է:

Դառնա՞ք մտերիմ ու լավ ընկերներ, Միասին փնտրենք ուսման ուղիներ,

Կակիծով, խոր ցավով ու մորմոքով է անցյալը ներկայացնում նաև զոհված ազատամարտիկ Դավիթ Դավթյանի թուր Մարինե Դավթյանը և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գայա Առստամյանը: Կարոտից տոչորվող մոր խոսքերից իմացանք, որ որդու կարոտը տանջում է իրեն, նրա սիրտը միշտ լցված է հայրենիքի սիրով, անհագ կարոտով, ականջը՝ ձայնի...

ՓՐԿԵՆԵ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԵԱՆՈՒՄՑ

- Փրկեցե՛ք ինձ, բարի՛ մարդիկ, ես կործանվում եմ, փրկեցե՛ք ինձ ձեզ համար,- դա բարոյականությունն է հուսահատ աղաղակով: Բարոյականությունը, որ կամաց-կամաց հեռանում է մեզանից, օտարանում, դառնում շատերին անհասկանալի մի երևույթ: Կամ էլ մենք ենք հեռանում նրանից՝ մեզ համարելով ժամանակակից: Զգիտե՛մ՝ ով ումից, սակայն անժխտելի է, որ բարոյականությունը մեր օրերում դարձել է, այսպես կոչված, դեֆիցիտ ու գնալով ավելի, ու ավելի է զգացվում նրա պակասը: Դե՛, նա էլ ստիպված աղաղակում է փրկել իրեն, ո՛վ գիտե, գուցե կլսե՛մ մարդիկ, գուցե դեռ ամեն ինչ կործանված չէ:

Մերո՞ք չէ դավաճանել ընկերներիդ, եթե անգամ խաբեբայի համբավ ունես:

Վերջերս Սուի Դայի Դավթյանի ամուսնը կրող միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ դաս-միջոցառում: 3-րդ դասարանի դասվար Ռիմա Պետրոսյանը միջոցառման թեմա ընտրեց «Բարոյականությունը և ժողովրդական բանահյուսությունը»:

Նրանք՝ փոքրիկները, համոզեցին լինել աշխատասեր, եթե անգամ արքայադուստր ես կամ էլ հենց արքա:

Բարոյականությունը հուսահատության մեջ էր, նրան բազմաթիվ կողմերից խոցել էին հայրենադավր, ազգուրացը, ընկերադավն ու ծնողուրացը, չարագործն ու անբանը: Ի՞նչ անել: Որտե՞ղ օգնություն փնտրել: Բարոյականությանը օգնության է հասնում ժողովրդական բանահյուսությունը՝ խոստանալով նրան փրկել կործանումից իր բազմաթիվ զավակների միջոցով, որոնք են՝ էպոսը, առակը, հեքիաթը, օրհնանքն ու ասացվածքը: Ժողովրդական բանահյուսության զավակներից յուրաքանչյուրը բարձր բարոյականության տարբեր դրսևորումներ են:

Երեխաները մեզ ներկայացրին նաև «Գողացված գիրը» բեմադրությունը: Դատապարտեցին տգետ ու չարագործ տիրակալին, ով ուզում էր խավարի մեջ պահել երկիրը, փակի տակ դնել իմաստուններին, գիրն ու գրականությունը, որպեսզի հեշտությամբ տիրի անուս մարդկանց: Տգետ արքան կարծում էր, թե ինքն ամենագոր է, հզոր ու ուժեղ, որովհետև շատ են ընդարձակվել իր երկրի սահմանները, կտրել բազմաթիվ գլուխներ, հատել անհնազանդ ծառաների ձեռքեր, արմատից պոկել լեզուներ:

Երրորդ դասարանից փոքրիկները ոգևորությամբ էին կատարում իրենց դերերը՝ փորձելով բարոյականության դասեր տալ թե՛ փոքրերին, թե՛ մեծերին, ովքեր ավելի շատ ունեն դրա կարիքը:

Մեր փոքրիկները, սակայն, համաձայն չէին տգետ արքայի կարծիքին, նրանք քայլ առ քայլ ապացուցեցին, որ ամենար է ապրել առանց լուսիսի, առանց գրի ու մայրենի լեզվի, որ խավարը կկործանի երկիրը, որ առանց գրի մարդ ոչ թե ուժեղ է, այլ՝ պարզապես մժեղ:


Դաս-միջոցառմանը մասնակցում էր ողջ դասարանը՝ ամեն մեկն իր հնարավորության ու ընդունակության չափով: Սա կարևոր համազանց է, երբ ողջ դասարանն է մասնակցում բեմադրությանը, ոչ ոք կողմնակի դիտորդի դերում չէր: Նրանք միահամուռ ուժերով փորձում էին մեզ համոզել, թե որքան քաջություն, հայրենասիրություն ու մարդասիրություն կա մեր Սասնա էպոսում: Այն սովորեցնում է լինել մեծահոգի ու մարդասեր նույնիսկ թշնամու հանդեպ: Թե որքան կարևոր են ընկերասիրությունն ու հավատարմությունը, եթե քեզ կարևոր գործ են վստահել ընկեր-

Այս միջոցառման մեջ նորություն էր այն, որ դասին մասնակցում էին թե ուսուցիչները, թե՛ աշակերտները և թե՛ ծնողները: Ծնողները զարմանքով պարզեցին, որ իրենց երեխաները մասն ընդունակություններ ունեն, իսկ այդ ընդունակությունները նրանց մեջ բացահայտել է ուսուցչուհի Ռ. Պետրոսյանը: Վերջում աղջիկները հարսի շորերով պարեցին «Մոկաց հարսեր» պարը, ներկայացրին «Թամազարա» երգ-պարը: Երեխաների երգն ու պարը պատշաճ ձևով մատուցելու պատիվը պատկանում է երաժշտության ուսուցիչ Արսեն Բաղդասարյանին:

Դիտորդները գոհ էին միջոցառումից, նրանք մեծ բավականություն ստացան բեմադրված դասից: Իսկ բարոյականությունն այլևս հուսահատության մեջ չէր, նա հրճվածից ժպտում էր՝ նայելով այս փոքրիկներին, նրանց գեղեցիկ պարին, հայեցի երգին, հավատում, որ նրանք ամուր կպահեն իրեն ու չեն կործանի անհետ:

Սուսանա ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
գ. Սոս

Խոսք հիշատակի ՎԱՆՅԱՎԱՐԵԳԻՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ



Մարտի 22-ին կյանքից հեռացավ ԼՂՀ անվանի գիտնական, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ճարտարագիտության ամբիոնի նախկին վարիչ Վանյա Գարեգինի Ավանեսյանը:

Ընդունվել է Աղրեջանի Ազիզբեկովի անվան արդյունաբերական ինստիտուտը, որն ավարտել է 1956-ին:

1957-62թթ. աշխատել է Բաքվի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտի հիդրոմեխանիկայի լաբորատորիայում՝ որպես գիտաշխատող: 1962-1965թթ. սովորել է Աղրեջանի արդյունաբերական ինստիտուտի ասպիրանտուրայում:

Իր ակտիվ կենսագործունեության ընթացքում աշխատել է նախկին Սովետական Միության տարբեր բուհերում՝ յուրաքանչյուր աշխատանք կատարելով բարձր պատասխանատվությամբ ու հավուր պատշաճի: Գերիմալ է բազմաթիվ գիտական ու մեթոդական հոդվածների, ձեռնարկների:

ԱրՊՀ ճարտարագիտության ամբիոնը իր խորին վիշտն ու զորակցությունն է հայտնում Վանյա Ավանեսյանի ընտանիքին:

ԱրՊՀ ճարտարագիտության ամբիոն

ԳՐԻԳՈՐ ԴԱՎԻԹ ԴԱՆԻԵՆՅԱՆ



Կյանքի 92-րդ տարում մեզանից հեռացավ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայտնի մանկավարժ և հոգեբան Գրիգոր Դավիթ Դանիելյանը:

Ծնվել է 1921թ., Մարտակերտի շրջանի Զափար գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Գաբրիել գյուղում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական տեխնիկումին կից 8-ամյա մանկավարժական կուրսերը և աշխատանքի անցել Վաղուհաս և Զափար գյուղերում՝ որպես դասվար: 1951թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1956թ. և աշխատանքի անցել ԳՀ լուսավորության նախարարության մանկավարժական բուհերի և ուսումնարանների բաժնում՝ որպես ավագ տեսուչ: 1960թ. աշխատանքի է անցել Երևանի մանկավարժական ինստիտուտում՝ որպես տեսուչ-մեթոդիստ և դասախոս:

1979թ. պաշտպանել է ստեղծագործությունն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այնուհետև տեղափոխվել է ԼՂԻՄ և աշխատանքի անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում (այնուհետև՝ ԱրՊՀ) նախ՝ որպես մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, ապա՝ «Արցախի համալսարան» թերթի խմբագիր, գիտքարտուղար, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

2011 թվականից թոշակառու է: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

Գերիմալ է տասնյակ գիտական և ուսումնամեթոդական հոդվածների:

Նա օգտվում էր ուսանողների և գործընկերների խորը հարգանքից և սիրուց:

Անվանի մանկավարժի և հոգեբանի, պայծառ մտավորականի հիշատակը երկար կապի սպորտների հուշերում:

ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

ՃՆՈՐՀԱԿՈՐԱՆՔ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԾՈՎ Է ՄԻ ԿԱԹՈՒԼ ՅՈՂԸ



Տարիներ են եկել-անցել, բայց նրան ծնկել չեն կարողացել: Նա մնացել է նույն Նորայրը, լավատես ու կենսախիճ, ներող ու հանդուրժող, մեր բառն ու բանը, մեր գիրն ու գրականությունը անսահմանորեն սիրող Նորայր Ավետիսյանը, Արցախում մեծ անուն հանած ճշմարիտ մի մտավորական, որի ծննդյան 80-ամյակը լրանում է ապրիլի 5-ին:

Սկզբից մինչ վերջ պինդ ձգված, պրկված 80 երկար-երկար տարիներ, որ չեն ունեցել դատարկ անկյուններ, կորած, հետք չթողած, անհմաստ օրեր:

Ահա մի բնորոշ փաստ, որ ինքնին խոսում է նրա նվիրվածության, համառության, պարտաճանաչության, պատասխանատվության բարձր զգացումի մասին: Շուրջ հիսուն տարի (1958-2007) աշխատել է (հիշեցնեն, որ 1953-ին ավարտել է Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտը, ապա՝ Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը) հայրենի Հաղորդիում: Ասել է թե՛ մոտ կես դար քայլել է նույն ներկի ճանապարհով՝ առանց հոգնելու, առանց ուժը, եռանդը խնայելու: Ու այս ամենի շնորհիվ վայելել աշխատանքային ընկերների, ծնողների, աշակերտների հարգանքն ու վստահությունը: Երեխաների առջև բացահայտել մեր մայրենիի գեղեցկությունն ու հմայքը, սովորեցրել մաքուր հայերենով արտահայտել իրենց մտքերն ու զգացումները, նրանց հոգեհարազատ դարձրել մեր քնարերգության հրաշալի գանձերը. ահա ինչն է եղել ամենահարապուրիչը նրա համար:

«Մարդիկ ասում են, որ լավ մասնագետ եմ, և ես ցանկանում եմ հավատալ այդ հաճելի «ստին»,- կարդում ենք նրա յուրօրինակ ինքնակենսագրականում, որ գետեղված է «Հաղորդի»-ի ամենավերջին էջում:

Եվ ինձ այնպես է թվում, թե սովորական այս տողերից հանձնարարություն է ծորում, պարզություն ու շիտակություն: Ո՞րն է լավ մարդ դառնալու չափանիշը, ի՞նչ է պետք դրա համար. այս հարցերն են շարունակ հուզել Նորայր Ավետիսյանին: Ահա ինչու նա միշտ ջանացել է զարգացնել սովորողների ճաշակն ու գեղագիտական զգացումները, նրանց մեջ դաստիարակել գաղափարական-քաղաքական վեհ հատկանիշներ, բնավորության ու վարքագծի հաստատուն գծեր:

Ու սա նրան հաջողվել է, քանզի նա խորապես գիտի մեր ազգային մշակույթը, մեր հին ու նոր գրականությունը, մշտապես հաղորդակից է լինում կյանքի նորույթներին, այսօրվա դարից առջև ծառայած խնդիրներին:

- Կրթական համակարգի բարեփոխումների կենտրոնում,- ասում է նա,- պետք է տեսնել ուսուցչին: Ցանկացած փոփոխություն իրականացնելու համար անհրաժեշտ են խոր գիտելիքներ ու հմտություններ: Հետևաբար՝ կարևոր է ինչպես ուսուցչի մասնագիտական զարգացումը, այնպես էլ ծառայած խնդիրների լուծման առումով նորովի մոտեցումների ու անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Այսպես է դատում վաստակաշատ մանկավարժը, որի հոգևոր աշխարհում ամեն օր մեր գրականության մեծերն են գրույցի նստում. եղիչե Զարեհ, Համո Սահյան, Հովհաննես Թումանյան, Պարույր Սևակ, Ալեսի Բակունց, Հովհաննես Շիրազ...

Ամենակարևորը՝ հայ պոեզիայի, մշակույթի, մեր ժողովրդի պատմության հանդեպ ունեցած իր հիացումը և տասնամյակներ շարունակ նա փոխանցել է իր սաներին, երիտասարդ ուսուցիչներին, բոլորին:

Ժամանակի քուրայում թրծված այսպիսի խոսք կա. «Մարդ լինելու համար մանկավարժ լինելը պարտադիր չէ, բայց մանկավարժը պարտավոր է մարդ լինել»: Այս խորիմաստ բառերը տարիներ առաջ նա գրի է առել իր կազմած «Ասույթների հավաքածու» մատյանում ու սիրում է ամեն պատեհ առիթով հիշեցնել նոր-նոր կյանք մտած ջահելներին՝ ավելացնելով. «Այո, ամենադժվար մասնագիտությունը մարդ լինելն է: Ես համոզված եմ սրանում»:

Հիրավի, մանկավարժ լինելուց զատ՝ նա մաքուր խղճի ու ազնիվ հոգու տեր անձնավորություն է, որին խորթ են բժնանքն ու շողորթությունը, խարդավանքն ու խաբեությունը, սուտն ու կեղծիքը:

Եվ ամենևին էլ զարմանալի չէ, որ նրան վստահում ու

դիմում են ոչ միայն դարից հարյուրավոր շրջանավարտներն ու աշակերտները, այլև նրանց ծնողները, պարզապես մարդիկ, որ կարեկցող սրտի, մտածված խոսքի, բարեկամական վերաբերմունքի կարիք ունեն: Այսպիսին է եղել (և՛ է) 1933-ին հեռավոր այն գյուղի՝ Հաղորդիի հողից ու ջրից սերված նոր այրը (Նորայր), որի համար օրրանն իր ամենաչքնաղ վայրը, անկյունն է աշխարհում: Հասկանալի է, Փարիզից հետո: Կատակում եմ, որովհետև ինքը շատ է սիրում կատակը, սրամտությունը, ասելիքը հումորով համեմելը, ծաղկեցնելը, հաճելի դարձնելը, մի բան, որ, թերևս, պակաս կարևոր չէ մարդ անհատի ընդհանուր զարգացածության, կրթվածության, մեծության մասին անսխալ պատկերացում կազմելու համար:

Հումորով օժտված լինելն արժանիք է, որ հատուկ պիտի լինի դասարան մտնող ու երեխայի միտքը հղկող իսկական ուսուցչին:

Դե իսկ, իմ գրչակից ընկերը (մեր մտերմությունը շուրջ վեց անգամ տասը տարիների վաղեմություն ունի) ճիշտ որ իսկական ուսուցիչ է, որի համար մանկավարժությունը ավելին է եղել, քան գուտ մասնագիտությունը: Ասենք, որ նա երկար տարիներ տնօրեն է եղել, ու նրա ղեկավարության օրոք շրջանում, մարզում անցկացված երգ-երաժշտության փառատոներում, առարկայական օլիմպիադաներում, սպորտային մրցումներում սովորողներն իրենց վատ չեն դրսևորել, մի բան, որ կուլեկտիվի միասնական ջանքերի արգասիք կարելի է համարել: Բաց դասերի, քննարկումների, հետաքրքիր միջոցառումների, հանդիպումների մասին չեմ խոսում: Ու սա քիչ բան չի ասում նրա կազմակերպչական ցիլի, պահանջկոտության ու հոգատարության մասին: Այո, հանձնարարված գործին նա երբեք մատների արանքով չի մայել: Բնավորություն է, որ գալիս է մանկուց:

- Մանկավարժն ու բժիշկը սխալվելու իրավունք չունեն, քանզի երկուսն էլ գործ ունեն կենդանի մարդու հետ: Ես իմ ողջ կյանքում առաջնորդվել եմ այս սկզբունքով,- ակնարկում է նա:

Ու մարդ դժվարանում է կողմնորոշվել՝ նրա համար բնական խառնվածքն է առաջնային եղել, թե՛ մանկավարժի ոգու սխրանքն ու արիությունը: Երկի երկուսն էլ:

Համեմայն դեպ, նա բացել է լուսավոր մի ուղի, որով այժմ ընթանում են շատ-շատերը՝ որպես իր արժանի հետնորդներ, կրթական ոլորտի նվիրյալներ: Ուշագրավ մի երևույթ կա: Ժամանակին նա կարողացել է ունենալ համոզել, որ դասագրքով բավարարվել չի կարելի, որ պետք է օգտվել լրացուցիչ աղբյուրներից՝ աշակերտների միտքը, ուղեղը շարժելու, դասը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու համար:

Եթե այս ամենին գումարենք այն, որ մանկավարժական գործունեությանը զուգահեռ նա զբաղվել ու զբաղվում է գրական-ստեղծագործական աշխատանքով, ամեն ինչ պարզ ու հստակ կլինի: Նա հինգ գրքերի՝ «Սիրտս անհամ-գիտ է», «Իմ Պղը-Պուղին», «Պղը-Պուղու նորոյա արկածները», «Բալլադ գոհված գինվորի ու մոր մասին», «Հաղորդի» (վեցերորդ տպարանում է), մասնուկում տպագրված հարյուրավոր ուշագրավ հոդվածների հեղինակ է: Այսօր էլ նա գիրքը, գրիչը ձեռքից ցած չի դնում: «Մարդ որ օրական գոնե 50-60 էջ չկարդա, մեր լեզվի համը, քաղցրությունը կհիմանա», - ասում է:

Այս օրերին նա հաճախակի է մայում-քրքրում տարիների իր դեղնած-խումացած թղթերը, սևագրերը, արածը «կշռում»: Իսկ արածը քիչ չէ: Ավելին՝ արժե տեսնել ու գնահատել:

- Մի մաքուր, մի բարի անուն թողնեմ սերունդներին ու գնամ,- սա է իմ երազանքը: Ինձ պետք չէ ոչ փառք, ոչ կայք, ոչ կարողություն: Այնպես որ, ես գոհ եմ իմ անցած ուղուց, իմ տպագիր տողերի նկատմամբ ընթերցողի մոտեցումից: Միանգամայն բնական այս զգացողությունը, թվում է, խտացված է Հ. Սահյանի «Շնորհակալ եմ» բանաստեղծության տողերում.

*Չեմ ուզում փառքի փոթորկուն ծովեր,
Ինձ համար ծով է մի կաթիլ ցողը:*

Արտասանում է նա՝ ասես վեհացած ու վերացած... Այս գեղեցիկ տողերով էլ ավարտենք մեր ասելիքը 80-ը բողբոս շնորհաշատ մանկավարժի, գրողի մասին: Ի սրտե շնորհավորենք մեր մարդենք, որ Տիրոջ կամքը նա դեռ շատ տարիներ «ուղք կախ գցի» ու ստեղծագործի՝ չնոռանալով, որ առջևում իրեն սպասում են ուրիշ տոներ, ամյակներ... Համոզված եմ, որ այս փառահեղ ամյակները տանող զառիվեր ճանապարհը եղբայրն իմ կանցնի առանց դադարի, առանց որևէ կանգառի:

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԵՐ ԳՈՐԾԵՆԿԵՐԸ



Կան մարդիկ, ովքեր իրենք են տնօրինում իրենց ճակատագիրը, վարքը, եռանդը, աշխատասիրությունը, իրենք են լուծում իրենց երիտասարդ մնալու հարցերը:

Այդպիսիներն ապրում են բնության հետ ընկերացած, վերցնում բնությունից և տարբեր ձևերով՝ գրականության, երաժշտության, կերպարվեստի միջոցով վերադարձնում են նրան, վերցնում և առատորեն շաղ են տալիս շրջապատում՝ իրենց շուրջը ստեղծելով բարիք, լույս և ջերմություն, բարոյական արժեքներ ու գեղեցկություն, ձևավորում մարդկային առողջ փոխհարաբերություններ:

Այլ կերպ՝ ամեն մարդ ինքն է ստեղծում իր կենսագրությունը: Գյուլչորա Արզումանյանը ստեղծել է իրեն արժանի և ուշագրավ կենսագրություն: Ծնվել է մանկավարժությանը նվիրվելու առաքելությունով:

Աշխատանքային կենսագրությունը սկսել է 1972թ.՝ աշխատանքի անցնելով հարազատ գյուղի դպրոցում որպես ավագ ջոկատավար, հետո՝ մաթեմատիկայի ուսուցչուհի, փոխտնօրեն: Հետո կոմերիտական աշխատանք՝ Ստեփանակերտի քաղկոմում:

Մանկավարժությունը Գ. Արզումանյանի կոչումն է, ուստի նա նորից դպրոցում էր, աշակերտների հետ: 1979-1991թթ. Այգեստանի միջնակարգ դպրոցի փոխտնօրենն էր, իսկ 1991-ից առայսօր՝ Խնածախի միջնակարգ դպրոցի տնօրենը:

Թե այդ տարիներին ինչքան գեղեցիկ միջոցառումներ ու ծրագրեր են իրականացվել երկու կրթօջախներում, ապավինենք բոլոր շրջանավարտների հիշողությանը. միայն նրանք կարող են ամենաճշգրիտ մանրամասնությամբ ներկայացնել Գ. Արզումանյան մանկավարժին, նվիրյալին, հայրենասերին:

Ինչպիսի հարցեր առաջադրեր վաստակաշատ մանկավարժը, թիվ մեկ պահանջը գտնում և դնում էր հայեցի դաստիարակության մեջ՝ սովորողներին տալով ազգային ուսուցում և դաստիարակություն:

Ընկեր Արզումանյանը, մեծ նշանակություն տալով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, գտնում է, որ նրանց մեջ անհրաժեշտ է զարգացնել հարցասիրություն ու հետաքրքրություն, ինքնուրույնություն, գիտունակություն: Նա գտնում է, որ մտավոր դաստիարակության առանցքը պետք է լինի ձևավորված գիտական աշխարհայացքը:

Գ. Արզումանյանը ապրում է «գեղեցիկի օրենքներով»՝ առաջնորդվելով ամեն ինչում գեղագիտական զգացումներով, արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ հետաքրքրություններ և նախասիրություններ, գեղեցիկի պահանջները դաստիարակելու սկզբունքներով:

Նա մանկավարժական նորարարության, համագործակցային մանկավարժության լավագույն իրականացմանը է:

Խնածախի միջնակարգ դպրոցը տնօրենի անմիջական նախաձեռնությամբ լավագույն մանկավարժական ձեռքբերումների, ավանդույթների կրողն ու պահպանողն է:

Գ. Արզումանյանի նշանաբանն է՝ ի հայտ բերել որոշակի կարողություններով օժտված, ներդաշնակորեն զարգացած երեխաների և ստանձնել նրանց անհատականության ձևավորման գործը: Նա դեմ է վարչական կոշտ մեթոդներով սովորողների հետ տարվող ցանկացած աշխատանքի:

Ըստ նրա՝ մանկավարժը պետք է լրիվությամբ իմանա սաների տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները, հոգեկան ապրումները: Հստակ պատկերացնելով, որ կյանքի հետ դպրոցի ոչ ամուր կապի ժամանակակից պայմաններում աշակերտների հանրօգուտ գործունեությունը սահմանափակելու պայմաններում նկատվում է դպրոցականի սոցիալական ակտիվության և ինքնագործունեության սառնում, Գ. Արզումանյանն իր պրպտուններում դրա լուծման ուղիները ևս գտել է: Համայնքի հրատապ հարցերը նա համարում է նաև դպրոցի հարց: Ցանկացած հարցում օժանդակում է, խորհրդակցում և խորհուրդ տալիս: Արդի պայմաններում արտադարոցական և արտադասարանական դաստիարակությունը համարելով սովորողների բազմակողմանի զարգացման կարևորագույն միջոցներից մեկը՝ նա միշտ որոնումների մեջ է համայնք-դպրոց-բնություն-հասարակություն քառուղիներում գտնելու սովորողների օպտիմալ հանգիստն ու հագեցած առօրյան: Համայնքի տարածքի աղբյուրների մաքրությունը, հուշարձանների խնամքն այն ամենամյա աշխատանքներն են, որոնք աշակերտները կատարում են ամենայն պատրաստակամությամբ:

Դպրոցում բարձր հիմքերի վրա է գիտակցական կարգապահությունը, որը տնօրենի և մանկավարժական կուլեկտիվի տարիների բեղմնավոր աշխատանքի արդյունք է:

Մյուսպիսին է Գյուլչորա Արզումանյանը. սկսած գործը եռանդով կատարելու, պատասխանատու և պատրաստակամ սովորությունը դարձել է բնավորություն: Նրա աշխատասիրությունը, համառությունն ու աներեր կամքը հաղթահարել են բոլոր խոչընդոտները՝ օրինաչափ դարձրել հաղթանակներն ու հաղթանակի բերկրանքը:

Շնորհավորենք մեր գործընկերոջը՝ ծննդյան 60-ամյակի առթիվ և ակնկալենք, որ իր երիտասարդ հոգով նա կշարունակի շաղկորեն բարիք, լույս, ջերմություն, գեղեցկություն սփռել շրջապատում:

Այժմ մարդիկ նվաճում են ոչ թե ֆիզիկապես՝ գերեվարվելով, այլ հոգեպես, տեսանելիորեն մնալով ազատ ու անկախ:

Գյուլչորա Արզումանյանը մեզ գրավում է հոգեպես:

Միջալե ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն
մանկավարժ

Սվեդլանա ԱՍՐՅԱՆ
Ասկերանի շրջվարչակազմի
կրթության բաժնի գլխավոր մասնագետ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌԱԶՄԱԿԱՆԱՅՎԱԾ ՀՆՎԱՄԱՐՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Մարտի 25-27-ը Ստեփանակերտի հանրապետական մարզադաշտում կայացան ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-9-րդ դասարանների պատանիների միջև «Ռազմականացված հնգամարտի» համրապետական մրցումներ՝ նվիրված Արցախյան շարժման 25-ամյակին:

Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը:

Մրցումների ծրագրով նախատեսված էին հետևյալ մրցաձևերը.

- վազք 100 մետր,
- վազք 1000 մետր,
- վերելք ուժով,
- նռնակի նետում հեռավորության վրա,
- ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազք:

Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էին 5 տղաներ, որոնք պետք է մասնակցեին բոլոր մրցաձևերին:

Մրցումների հանդիսավոր բացման ժամանակ ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Մ. Համբարձումյանը, ողջունելով մասնակիցներին, կարևորեց նման մրցումների կազմակերպումը՝ որպես ռազմամարզական կարևոր միջոցառում, ֆիզիկապես ուժեղ հայրենիքի պաշտպաններ նախապատրաստելու գործում: Քանի որ մասնակցելով նման մրցումների՝ նրանց մոտ կզարգանա ռազմամարզական կոմբինացվածությունը:

Մասնակիցներին ողջունեց ու հաջողություններ մաղթեց նաև ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմա-հայրենասիրական դաստիարակության և ՀԿՀԿ բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանը:

Մրցումների անցկացման կարգն ու վիճակահանությանը հերթականությունը որոշելուց հետո սկսվեցին մրցումները:

Մրցումների առաջին օրն անցկացվեցին մարզական չորս մրցաձևերը, իսկ երկրորդ օրը մասնակիցները մրցեցին ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազք մրցաձևից:

Ծավալված համառ և անզիջուն մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթող հավաքականներին.

- 1-ին տեղ - ք. Ստեփանակերտ
 - 2-րդ տեղ - Մարտունու շրջան
 - 3-րդ տեղ - Մարտակերտի շրջան
- Անհատական առաջնությունում հնգամարտի արդյունք-

ներով 1-ին տեղն զբաղեցրեց Ժիրայր Զաքարյանը՝ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոց, 2-րդ տեղը՝ Թաթուլ Սարգսյանը՝ Շահումյանի շրջանի Ականաբերդի միջնակարգ դպրոց, 3-րդ տեղը՝ Անդրանիկ Իսանյանը՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց:

Վազք 100 մետր և վերելք ուժով մրցաձևերում հաղթող ճանաչվեց Ժիրայր Զաքարյանը՝ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցից:

1000 մետր վազքատարածությունում հաղթող ճանաչվեց Գեորգի Գասպարյանը՝ Մարտակերտի հ. 1 ավագ դպրոցից:

Նռնակի նետում հեռավորության վրա մարզաձևում հաղթող ճանաչվեց Թաթուլ Սարգսյանը՝ Շահումյանի շրջանի Ականաբերդի միջնակարգ դպրոցից:

Ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազքի մրցումներում լավագույնը ճանաչվեց Արթուր Ասրյանը՝ Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցից:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների, պատվոգրերի, թանկարժեք նվերների և դրամական պարգևների:

Պատվոգրերի և հուշանվերների արժանացան հինգ մրցաձևերում լավագույններ ճանաչված տղաները:

Դրամական խրախուսման արժանացան մրցանակային տեղեր գրաված՝ Ստեփանակերտ քաղաքի, Մարտունու և Մարտակերտի շրջանների հավաքականների մարզիչները:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները պատվոգրեր և արժեքավոր նվերներ ստացան ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից: Պարգևատրումները կատարեց նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և ՀԿՀԿ բաժնի ավագ սպա՝ կապիտան Դ. Օհանջանյանը:

Ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազքի մրցումներում 1-3-րդ տեղեր գրաված Ստեփանակերտ քաղաքի, Շուշիի և Հադրութի շրջանների հավաքականները պատվոգրեր ու արժեքավոր նվերներ ստացան ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայության տնօրենության կողմից: Պարգևատրումները կատարեցին գնդապետ Ա. Զավադյանը և փոխգնդապետ Հ. Դավթյանը:

ԲԱՍԿԵՏԲՈՒԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում կայացան ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-9-րդ դասարանների աղջիկների և տղաների միջև բասկետբոլի հանրապետական մրցումներ: Մասնակցում էին մայրաքաղաքի և ԼՂՀ հինգ շրջանների հավաքական թիմերը: Մրցումներին թիմեր չէին ներկայացրել Շահումյանի և Մարտակերտի շրջանները:

Մարտի 11-15-ը մրցեցին աղջիկների, իսկ 18-22-ը՝ տղաների հավաքականները:

Ուրախությամբ կարելի է փաստել, որ բասկետբոլ մարզաձևը գնալով մեծ մասսայականություն է վայելում դպրոցականների շրջանում, ինչի ապացույցը նախորդ տարիների համեմատ թե՛ աղջիկների և թե՛ տղաների ցուցադրած հաջողված խաղերն էին:

Հատկապես գրավիչ էր տղաների միջև եզրափակիչ խաղը Ստեփանակերտ քաղաքի և Հադրութի շրջանի հավաքականների միջև:

Նման մրցումների կազմակերպման հիմնական նպատակներից մեկն է՝ բացահայտել լավագույն մարզիկ դպրոցականներին հանրապետության աղջիկների և տղաների հավաքականները համալրելու համար:

Ծավալված համառ և անզիջուն մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողներին:

Աղջիկների մրցապայքարում 1-ին տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի թիմը, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին Ասկերանի և Հադրութի շրջանների հավաքական թիմերը:

Պատանիների մրցապայքարում մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ Ստեփանակերտ քաղաք, 2-րդ տեղ՝ Հադրութի շրջան՝ 3-րդ տեղ՝ Քաշաթաղի շրջան:

Նրանք պարգևատրվեցին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության դիպլոմներով ու գավաթներով:

Թիմերի բոլոր 10-ական անդամները պարգևատրվեցին համապատասխան կարգի մեդալներով:

Ձեռքի ժամացույցներ ստացան և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրերի արժանացան լավագույն խաղացողներ ճանաչված դպրոցականները. աղջիկներից՝ Քրիստինե Ասրյանը (Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոց), իսկ տղաներից՝ Յուրի Հարությունյանը (Ստեփանակերտ քաղաքի հ. 3 միջնակարգ դպրոց):

Պարգևատրումները կատարեց, հաղթողներին շնորհավորեց և հետագա անձնական ու մարզական հաջողություններ մաղթեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը:

Տղաների մրցումների հանդիսավոր փակմանը ներկա էր ԼՂՀ բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ Վ. Միքայելյանը, որը մարզական համագոյությունը նվիրեց 2-րդ տեղը գրաված Հադրութի շրջանի հավաքականի բոլոր անդամներին, իսկ 1-ին տեղը գրաված Ստեփանակերտ քաղաքի հավաքականի անդամները ֆեդերացիայի նախագահի կողմից արժանացան դրամական պարգևների:

Մուկաթ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հրաժեշտի խոսք

ԱՊՐԵՑ ԼԵՅՈՒՆ, ԿԵՆՍԱԽԻՆԴ ԿՅԱՆՔՈՎ



Այս կյանքին ու աշխարհին անժամանակ հրաժեշտ տված մեր անմոռանալի գործընկերուհի, սիրելի Ստելլա Գաբրիելյան:

...Հրաժեշտի վերջին ճանապարհով էլ անցավ հարազատ դպրոցի մոտով... Ապրածդ կենսախիղճ կյանքի ողջ պարունակումն ասես իմաստավորվեց և ամբողջացավ այն ակնթարթների մեջ, երբ վերջին անգամ քո գեղեցիկ, բայց առած հայացքով հրաժեշտ տվիր դպրոցի շեն տանող աստիճաններին, քո հպարտ կեցվածքը քանի՜ հարյուրերորդ անգամ իրենց գիրկն առած պատերին:

Ապրեցիր ընդամենը քառասունութ գարուն, բայց ապրեցիր լեցուն, կենսախիղճ կյանքով, դժվար պահերդ անգամ կյանքով էին լցված, բնությունը իր գույների ներկայանակից քեզ բաժին էր հանել ամենից վառ գույները, և զգացմունքային բնավորությամդ պատճառով կյանքի՝ քեզ մատուցած բոլոր մարտահրավերները տարել ես սրտով ու հոգով...

Անընդհատ վազքի մեջ էիր, քո անսպառ աշխատասիրությամբ ու վճռականությամբ ուզում էիր բռնել, պահել տարածությունն ու ժամանակը...

Ավա՜ր... Կանգնեց քո ժամն ու ժամանակը... Սիրելի Ստելլա, մենք հավատում էինք, որ կհաղթես դուռդ բախող աննահանջ ու անողորմ մահին, հավատում էինք, քանզի ուժեղ էիր, միշտ հպարտ ու հաղթական կեցվածքով, կյանքին՝ սիրահար... ու մեծ վիշտ ու ցավ թողնելով քեզ ճանաչողների սրտում, գնացիր, հրաժեշտ տվիր բոլորիս՝ մնալով միշտ գեղեցիկ...

Մենք՝ քո սաները, քո գործընկերները, քեզ հետ կյանքի քաղցր հուշեր ունեցողները, չենք մոռանա քեզ, քո հիշատակը վառ կպահենք մեր սրտերում...

Ստեփ. հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՐՈՒՄՅԱԿ ՆԵՐՍԵՍԻ ԲԱԲԱՅԱՆ



Մարտի 8-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց բազմավաստակ ուսուցչուհի, բազմազավակ մայր Արուսյակ Ներսեսի Բաբայանը:

Ա. Բաբայանը ծնվել է 1935թ. մարտի 12-ին, Կոլխոզաշեն գյուղում: Միջնակարգ ավարտելուց հետո 1952-1954թթ. ուսանել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում՝ ձեռք բերելով ֆիզիկա և մաթեմատիկա մասնագիտություն: Մանկավարժական աշխատանքի մկրտությունն ստացել է Ծովատեղի ութամյա դպրոցում, այնուհետև 1955-ից մինչև թոշակի անցնելն աշխատել է Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: Պարտաճանաչ ու սիրված ուսուցչուհի էր, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին նվիրյալ, բարու և ազնվության տիպար: Սրտացավ ընկեր էր, բարեկամ ու հարևան: Ուներ բարձր պատասխանատվություն ցանկացած գործի նկատմամբ և պարտքի զգացում: Ոչ միայն դասավանդելիս, այլև թոշակառու եղած տարիներին օգտվել է իր սաների հարգալից և անկեղծ սիրուց: Ամբողջ գյուղի համար «ընկեր Բաբայան էր»:

Հիմա մա չկա. բռնել է հավերժության ճանապարհը, բայց կիիշեն նրան բոլորը՝ ընկերները, սաները, գյուղի հասարակությունը, բոլոր նրան ճանաչողները՝ որպես բարի, անսպառ, սրտացավ և աշխատասեր անձնավորություն:

Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ